



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏԵԱՆ
ՅՈՅՍԸ ԵՒ ՄԻՍԻՈՆԱՐՈՒԹԻՒՆԸ
ՀԱՒԱՏՔ

Գ. Գ. Խ.
 ՍԱՄՈՒԷԼ Պ.

Հոգ. Կեանք

ՄԵՂՔԸ
ՀՈԳԻՒ ՄԸ ԱՃՈՒՐԴԻ ԴՐՈՒԻԼԸ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Ազատ Թարգմ. Ն. Մ.
 Թրգ. Տ. ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ

Ս. Գրական ուսումնասիրութիւն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ
ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ
 Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

Կենսագրական

ԿՈՄՍ ՑԻՆՅԷՆՏՈՐՅ

X X X

Մանկանց սիւնակ

ՈՒՐ ԵՆ ՔՈՒ ՄԵՂՔԵՐԴ

Զանազան լուրեր

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաները եւեւ ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարար կը զգան Աստուծոյ խօսքին անխարդախ վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհատներու համար, այլ ամենուն, ուստի Յշմարիտ «Բան»ին ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանումնութիւն մը, հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաները երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ կը տպուին Մարսէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ եւ Պատ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳԳԱԼԵԱՆ

Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր լոգանդակութեամբ: Այս պարագան դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխանատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որոն զրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 13 Ֆրանք
 Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԳԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
 Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԳԵՐԷՆ** միասին Ֆրանսա եւ
 Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
 կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ զրկուելու են
 Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆԻ, իսկ ղրամական առաքումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Արմենի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն,
ընէ, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Ուրեմն ա'լ վսիմանք, որ չլլայ թէ
Անոր հանգիստը մոնելու խոստումըքէն որ մեզի մնացեր է,
ծեզմէ մէկը գրկուած գտնուի: Եբր. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է'
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Եբր. Ժ. 37

Ը. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ 1952

ԹԻԻ 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼԱՏԵԱՆ ՅՈՅՍԸ

ԵՒ ՄԻՍԻՈՆԱՐՈՒԹԻՒՆԸ

Նախորդ խմբագրականով ջանացինք պարզել թէ հաւատացեալը պատճառ չունի սարսափելու այժմու ճգնաժամէն, քանզի անոնց մէջ ալ ներկայ է մեր Տէրը Իր Հոգիովը եւ կ'ուզէ անոնց միջոցաւ մեզի Իր առատ օրհնութիւնները շնորհել եւ Իր փառքն յայտնել: Ուրիշ տեսակէտով մըն ալ, վախճալու չենք քաղաքական տնտեսական, բարոյական ու հոգեւոր տագնապէն: Ան՝ ոտնաձայն է Քրիստոսի երկրորդ գալստեան, սուրբերու յափշտակութեան ու Հաղարամիայի հաստատման: Որքան բազմաւոր «Պատերազմներն ու պատերազմներու ձայները» եւ յաճախադէպ ըլլան «սովերը, մահտարածամները, երկրաշարժներն», ու այլ բնական հարուածները, որքան խիստ հալածանքի ենթարկուին հաւատացեալները ու այդ պատճառաւ գայթակղին ու սիրոյ մէջ տկարանան թերահաւատները, ու որքան շատնան «սուտ մարգարէներն ու սուտ քրիստոսները», հոգեհարցներն ու մոլար վարդապետութեանց հետեւողները, այնքան աւելի մօտ է Յիսուսի յայտնութիւնը փառաւորեալ մարմնով (Մատթ. ԻԳ. 5-34), եկեղեցւոյն ազատագրման ու իր Փեսային հետ միացման: Եւ մենք այդ ըզձալի օրուան գալուստը կրնանք փութացնել երկու կերպով:—

Առաջին՝ թոյլ տալով որ Քրիստոսի Հոգին օրէ օր ալ աւելի զօնէ զմեզ, որպէսզի Ինքը Իր ղիմացը փառաւոր կեցնէ եկեղեցին, որ արատ մը կամ խորշոմութիւն կամ ասոնց նման բան մը չունենայ, հապա սուրբ ու անարատ ըլլայ, (Եփես. Ե. 27): Գաղտնկին հարսանիքը այնքան

աւելի շուտ կուգայ, որքան շուտ որ Անոր հարսը ինքզինքը պատրաստէ եւ զարդարուի մաքուր ու լուսափայլ բեհեզներով, — սրբութեան զգեստներով (Յայտ. ԺԺ. 7, 8): Ինչպէս մեր մեղքերու քաւութիւնը, նոյնպէս ալ մեր սրբութիւնը Յիսուս գնած է Իր արիւնովը: Մեզի կը մնայ առաջինը իւրացնել հաւատքով, իսկ երկրորդը՝ ոչինչ այնքան կը նպաստէ, որքան տառապանքի հալոցը: Ուստի չտրտնջենք տնտեսական տագնապին, հիւանդութեանց և հալածանքներու դէմ. ասոնք քուրայ են. Տէրը մեզ հոն կը նետէ՝ մեզ խառնուրդէ ազատելու եւ մաքուր ոսկիի վերածելու, մեր դէմքի բիծերն ու արատները մաքրելու համար, որպէսզի Ինքը շուտ գայ եւ մեզ իր քովն առնէ: Այս առաջին կէտին վրայ շատ չխօսինք որպէսզի ատեն ունենանք երկրորդին համար, քանի որ ան է այսօր մեր նիւթը:

Երկրորդ՝ ներքին եւ արտաքին միսիոնարութեան ոյժ տալով: Քրիստոս չպիտի գայ մինչեւ Համբողջանայ եկեղեցին, որ շատ յարմարօրէն նմանցուած է շէնքի մը: Եթէ պատի մը մէկ քարը պակսի, կը վտանգուի ամբողջ շէնքը, եթէ տանիքին մէկ կողմէնտրը ծուռ դրուած ըլլայ, կաթկթակը կը նեղէ ամբողջ ընտանիքը, եթէ աստիճանին վրայ փոքր լամբայ մը իր լոյսը չտայ, կրնայ արկածի մը պատահիլ տան բռնակիչներէն մին կամ միւսը: Նոյնպէս ալ եկեղեցին կատարեալ չէ, եթէ հոն կը պակսի կամ իր պարտականութիւնը թերի կերպով կը կատարէ ամենէն փոքր գործին համար իսկ սահմանուած անձը:

Այդպիսիները փնտռելու եւ գտնելու վսեմ ծառայութիւնը յանձնուած է եկեղեցւոյն որքան եռանդուն կատարէ անիկա այդ պարտականութիւնը, որքան շուտ ամբողջացնէ ինքզինքը, այնքան աւելի շուտ պիտի գայ իր Տէրը, և այդ պարտականութիւնը պիտի կրնայ կատարել եկեղեցին

1. Ներքին միսիոնարութեամբ: Այսպէս կը կոչուի այն գործը, որուն նպատակն է այլեւայլ միջոցներով քրիստոնեայ կոչուած երկիրներու անդարձները Քրիստոսի առաջնորդել: Թէև այս գործին նուիրուած են մասնաւոր պաշտօնեաներ ու կազմակերպուած մարմիններ, բայց այդ պարտականութենէն ինքզինքը ազատ զգալու չէ ոեւէ հաւատացեալ: Ոեւէ զգայուն անհատ ջանք մը չխնայեր՝ զոնէ անձ մը ազատելու այն տունէն, որ հրդեհուած է: Ուստի ինչպէ՞ս կըրնայ հաւատացեալը անտարբեր դիտել, որ զէպի կորուստ կ'երթան այն հոգիները որոնց համար չարչարուած ու մեռած է իր Տէրը: Այդպիսի անտարբերութիւն մը կը նշանակէր թէ մենք գործնականօրէն դեռ զաղափար չունինք երկիրների ու դժոխքի, Աստուծոյ սրբութեան ու արդարութեան, անապաշխարին աղիտալի վիճակին եւ Քրիստոսի անոր հանդէպ ունեցած սիրոյն նրկատմամբ: Կրնա՞նք ինքզինքնիս արդարացնել ըսելով՝ աւետարանչութեան կարողութիւն չունինք, երբեք: Անպայման կրօնական պաշտօնեայ մը ըլլալու չենք եւ ոչ ալ բեմերէն խօսելու ենք մեր ընկերը Քրիստոսի առաջնորդելու համար: Այդ գործին մէջ կրնայ ծառայել մեզմէ ամէն մէկը իր գտնուած տեղին ու վիճակին մէջ ալ. մին իր սիրազեղ ու իմաստուն խօսքերովը, ուրիշ մը իր սրտաբուլիս բարեխօսական ազօթքովը, երրորդ մը հիւանդութեան եւ այլ տառապանքներու մէջ իր ի յայտ բերած համբերութեամբը եւ ուրախութեամբը, չորրորդ մը Յիսուսի սէրէն բղխած զթութեան և հաւատքի գործերովը եւն. են: Բաւական է միայն որ մենք մեր ծառայութիւնն ընենք մզուած Քրիստոսի սէրէն ու մեր ընկերը իր դժբաղդ վիճակէն ազատելու փափաքէն և ուրանալով մեր պատիւն ու եսը:

2. Արտաքին միսիոնարութեամբ: Դեռ մարդկութեան մեծամասնութիւնը հեթանոս ու մահմետական է: Յիսուս անոնց մէջ ալ ոչխարներ ունի, զորս իր բակը բերել կ'ուզէ (Յովհ. Ժ. 16), ուստի կը փափաքի որ «Արքայութեան աւետարանը բովանդակ աշխարհի մէջ քարոզուի, բոլոր ազգերուն վկայութիւն ըլլալու համար» (Մատթ. Ի. 14), որպէսզի անոնց մէջէն ալ ճշմարտու-

թիւնը փնտռող հոգիները Քրիստոսի փրկութեանը հասնին: Շիտակ է թէ վերջին ժամանակներս միսիոնարներու թիւը շատցած է եւ Հիւս. Ամերիկա ու եւրոպական շատ ազգեր իրենց միսիոնարական ընկերակցութիւններն ունին: Շիտակ է թէ Աստուծոյ զաւակներէն շատեր մեծ եռանդով, անձնուիրութեամբ եւ Քրիստոսի սէրէն դրդեալ կ'աշխատին հեթանոս երկիրներու մէջ՝ յաճախ իրենց անձը վտանգի մէջ դնելով: Շիտակ է նաև թէ մեր Տէրը օրհնած է անոնցմէ շատերու տկար ջանքերը եւ հոս ու հոն օրէ օր կ'աւելնայ փրկուածներու թիւը, սակայն եւ այնպէս դեռ կը գտնուին ընդարձակ երկրամասեր, ուր մէկ միսիոնար իսկ չգտնուիր եւ ուր մարդիկ մեր փառաբերալ Փրկչին անունն իսկ լսած չեն: Ուստի Ան իր գալը դեռ կ'ուշացնէ, կը սպասէ որ դեռ շատերու քարոզուի Արքայութեան աւետարանը:

Եթէ կ'ուզենք փութացնել Անոր գալուստը, ոյժ տանք միսիոնարական գործին: Կը խորհիմ թէ մենք հայ հաւատացեալներս ալ մեծ պարտականութիւն ունինք այդ մասին: Աստուած մեզ լուրջ դպրոցէ մը անցուցած է: Թուլատրած է որ կողոպտեն մեր ստացուածքը, որպէսզի մեր աչքերը յաւիտենական ու մնայուն բարիքներուն դարձնենք ու երկրի վրայ գանձ դիզելու չզրադինք, թրծած է մեր մարմինը անօթութեան ու մերկութեան ու տաքի եւ ուրիշ տառապանքներու միջոցաւ, որպէսզի մենք կարենանք դիւրութեամբ արհամարհել այդ կարգի դժուարութիւնները՝ իր անուանը համար. ձգած է որ արհամարհանքի ենթարկուինք, որպէսզի մեզի դժուար չգայ իրեն համար նախատինք կրել, եւ առած է մեր ամենէն սիրելի ազգականները, որպէսզի Քրիստոս ըլլայ մեր սիրոյն ամենամեծ առարկան: (Տես, այս թւոյն Յինցէնտորֆը):

Ասոնցմէ զատ մենք երկար տարիներ ապրած ենք թուրքերուն ու քիւրտերուն մէջ եւ ծանօթ ենք անոնց լեզուներուն, մտայնութեանը, զգացումներուն ու փափաքներուն եւ տկար ու զօրաւոր կողմերուն: Հետեւաբար մասնաւոր դիւրութիւններ պիտի ունենան մահմետականաց մէջ աշխատելու մեզմէ անոնք, որոնք Աստուծոյ յատկապէս պիտի կանչուին այդ գործին համար: Ո՞վ են ատոնք, չենք գիտեր, միայն այսքանը ծանօթ է մեզի, որ մեր եղբայրներուն ու քոյրերուն մէջ կը գտնուին այնպիսիներ, որոնք կ'ազօթեն մահմետականաց համար, կը սիրեն զանոնք, կ'ըղձան որ դառնան անոնք եւ պատրաստ են ամէն զոհողութիւն յանձն առնել այդ ուղղութեամբ: Կը հաւատանք թէ Աստուած թաքուն կերպով

Հ Ա Ի Ա Տ Բ

Եւ ասիկա է յաղթութիւնը՝ որ աշխարհի կը յաղթէ, այսինքն մեր հա-
ւատքը: Բայց առանց հաւատքի անհնար է Աստուծոյ հաճոյ ըլլալ:

2'է որ հաւատքով գիտենք որ Աստուած աշխարհը կանչեց ոչինչէն ի գոյ:

Առեւն ստեղծեց մեծափառութեամբ որպէս թագաւոր, լուսինը դժխոյ:

Եւ դեռ իր հօր առանցքին վրայ դարձող անհամար հրեղէն գունդեր,
Որոնք անհառաչ, խօլ թաւալուծով կը վազեն իրենց ծագումէն ի վեր...

2'է որ հաւատքով գիտենք որ Աստուած երկինքն հաստատեց պարապին վրայ,

Եւ ոչինչին մէջ երկիրը կախեց՝ որ խելագարի պէս միշտ կը դառնայ:

Չանոնք փաթաթեց լոյսով, կանանչով եւ հարստութեամբ մեծ ու անպարփակ:

Ու հոն ստեղծեց շնչաւոր ամէն տեսակ կենդանի, թռչուն, մարդ, հրեշտակ:

.....

Այն շօշափելի նիւթը ակններեւ՝ թաքուն իրերու պատկերն է միայն:

Եւ մեր հաւատքը ապացոյցն է սուրբ, անտեսանելի մեծ ճշմարտութեան:

Մեր հայրերը միշտ, լուռ սպասումով գալիք աշխարհին փառքը երգեցին...

Մենք ալ մեր կարգին յուսով զօրացած՝ կ'սպասենք վսեմ նոր Հայրենիքին:

.....

Հաւատք, դիտակ մ'է՝ որով միշտ կրնանք դիտել ապագան պարզ ինչպէս ներկան,

Եւ խաղաղութեամբ երգել ու գործել լոյսի մէջ քալող սուրբերուն նման:

Ոսկեծոյլ բուրվառ՝ ուր կրնանք ծխել մեր սուրբ աղօթքներն, մեր սէրն անապակ,

Մեր օրհներգութիւն, ցաւ, աղերս, մարմաչ, արցունք եւ ժպիտ, մեր կեանքը համակ...

Հաւատքը կապն է՝ որով արարածն կրնայ հանգուցուիլ իր Արարիչին:

Լուսայորդ աղբիւր՝ ուրկէ կը հոսի ամէն օրհնութիւն... ոյժ, սէր երկնային:

Թեւեր՝ որոնցմով անխոնջ, անարգելք կրնանք թեւածել բարձունքէ բարձունք,

Մինչեւ Բարձրեալին մեզի պատրաստած ազատութեան սուրբ երկիրն անարցունք:

.....

Բայց անհնար է առանց հաւատքի հաճելի ըլլալ Բարձրեալ Աստուծոյն:

Եթէ ճշմարիտ խորունկ կարօտով կ'ողգէք վայելել էական գերագոյն:

Պէտք է անկասկած հաւատալ թէ Նա «կար, կայ եւ պիտի ըլլայ» յաւիտեան,

Եւ վարձահատոյց է այն ամենուն՝ որ զինք կը փնտռեն զաւակի նման:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

կը ներգործէ անոնցմէ ոմանց մէջ եւ կը պատրաս-
տէ զանոնք: Կը հաւատանք նաեւ թէ օր մը պի-
տի հնչէ Տէրոջ հրամանը, «Չատեցէք ինծի զա-
նոնք այն գործին համար, որուն Ես կանչեմ եմ»:

Մեր պարտականութիւնն է նուիրումով աղօ-
թել որ Տէրը շուտով պատրաստէ այդ նուիրեալ-
ները, ինչպէս նաեւ եկեղեցիներ կամ մասնաւոր
միութիւններ, որոնք Անտիոքի եկեղեցւոյն նը-
ման իրենց ձեռքն առնեն միախոնարական գոր-
ծը: Այս մասին մեծ բան կը սպասենք մասնաւոր
բարբար Սուրբոյ հայ հաւատացեալ շրջանակնե-

րէ, քանի որ անոնք ուղղակի մահմետական կեղ-
րոններու մէջ կը գտնուին: Չվախնանք, միախո-
նարական գործը չպիտի տկարացնէ մեր եկեղե-
ցիները: Փորձը ցոյց տուած է որ աւելի եռան-
դուն, միաբան, կենդանի ու զոհող են այն հա-
մայնքները որոնք միախոնարական գործ կը կա-
տարեն: Հոս ալ իրողութիւն է թէ «Ան որ կ'ոռո-
գէ, ինք ալ կ'ոռոգուի»: Տէրը օգնէ մեզի տեսնե-
լու այս մեծ պարտականութիւնը, զոր զանց ա-
ռած ենք երկար տարիներէ ի վեր:

Գ. Գ. Ն.

ՀՈԳ. ԿԵԱՆՔ

ՄԵՂՔԸ

Միտքերնիս պահելու ենք շարունակ թէ մեր փնտռածը տեսակ մը ոյժ, ելեկտրական ցնցում, յուզում կամ յափշտակութիւն չէ, այլ աւելի կատարեալ ճանաչումը անձնաւորութեան մը, աւելի մտերիմ հաղորդակցութիւն Անոր հետ, բոլորանուէր հպատակութիւն Անոր կամքին, աւելի մեծ սէր Անոր հանդէպ եւ անվերապահ ու կատարեալ յանձնումը Անոր բացարձակ գերիշխանութեան: Այդ անձնաւորութիւնը Աստուծոյ Սուրբ Հոգին է. մեր Մխիթարիչը, Փաստաբանը, մեծ Բարեկամը, որ վերին զօրութիւնովը մեր մէջ կը ներգործէ: Նոյն Ինքն է զօրութիւնը: Անիկա արդէն մեր սիրտերուն մէջ կը գտնուի, սակայն կ'սպասէ որ Իրեն կատարեալ գերիշխանութիւն տանք մեր կեանքերուն վրայ: Անիկա գիտէ թէ ամբողջովին Իր ձեռքերուն մէջ գտնուելով միայն կրնանք զօրութեամբ լեցուիլ: Ճիշդ Իր կամքին համեմատ խօսիլ, ապրիլ, քալել եւ գործել:

Կ'ըսուի թէ Կեղրոնական Ափրիկէի խափշիկները, «Իմ ժամանակներս Քու ձեռքդ են», (Սաղ. ԼԱ. 15) խօսքը հետեւեալ փառաւոր կերպովը թարգմանած են, «Իմ կեանքիս բոլոր ինչունները, երբերը, ուրերը եւ ի՞նչ նպատակի համարները Քու ձեռքերուդ մէջ են»: Եթէ յօժար ենք այս թարգմանութեան համաձայն ապրիլ, արդէն զօրութեամբ լեցուած քրիստոնեաներ ենք: Սուրբ Հոգին չէ թէ միայն մեր սիրտերուն մէջ՝ այլ նաեւ մեր մարմիններուն մէջ կը բնակի ու զանոնք տաճարներու կը վերածէ: «Զէք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին որ ձեր մէջ է... ու դուք ձեր անձին տէրը չէք» (Ա. Կոր. Զ. 19): Անոր մեր մէջ եւ մեր միջոցաւ գործելը զօրութիւն է:

Ճարտնցի մը իրեն յանձնուած աւանդի մը նկատմամբ անհաւատարիմ գտնուելով՝ անձնասպան ըլլալու դիտաւորութեամբ կը հեռանայ ծննդավայրէն: Ճամբորդութենէն յոգնած՝ կը մտնէ վրան մը ուր ճիշդ այդ պահուն Աւետարանչական ժողով մը կ'ըլլար: Հոն իր մեղաւոր ըլլալուն համոզուելով Աստուծոյ խաղաղութիւն կը գտնէ: Այսպէս վերստին ծնանելէն չորս օր յետոյ հետեւեալ նշանակալից խօսքը կ'ուղղէ միսիոնարին: «Ինչպէ՞ս կրնամ չհաւատալ Քրիստոսի յարութեան, քանի որ Անիկա իմ սրտիս մէջ յարութիւն առաւ: Իմ մարմինս Քրիստոսի

տաճարն է, ուրեմն մեղանչելով զայն արատաւորելու չեմ, եթէ մեղանչեմ, իմ մէջս բնակող Տէրը յանցաւոր կը սեպուի»:

Տակաւին չորս օր առաջ այս մարդը քրիստոնէական որեւէ ճշմարտութեան բոլորովին անտեղեակ էր. ոչ ալ Աստուծոյ այս խորունկ բաներուն մասին որեւէ քարոզ լսած էր. ուրեմն անոր միակ ուսուցիչը անոր մէջ բնակութիւն հաստատող Սուրբ Հոգին եղած էր: Արդեօք ինչո՞ւ մենք այսքան ուշ կը սորվինք այս ճշմարտութիւնները:

Սուրբ Հոգին մեր Երկնաւոր Հիւրն է: Եթէ մեր սիրելի բարեկամներէն մին մեզի հիւր ըլլար, ի՞նչ ակնկալութիւններ ընելու իրաւունքը պիտի ունենար: Անտարակոյս մեր բարեկամութեան եւ սիրոյն վստահ ըլլալով պիտի ակնկալէր որ մեր ժամանակը եւ ուշադրութիւնն ալ իրեն տրամադրէինք: Շատ պիտի զարմանար եթէ Իրեն կարեւորութիւն չտայինք: Մենք միշտ կը մտածենք հիւրին հանգստութեան մասին: Կը ջանանք որ անոր անհաճոյ բան մը չընենք: Անոր չսիրած կերակուրները չենք դնել անոր առջին եւ ոչ ալ կը թուլատրենք որ անոր հաճելի չեղող անհատներ անոր մօտենան: Մեր ունեցածներուն ամենալաւը անոր կը մատուցանենք եւ սրտանց կը փափաքինք որ իր տանը պէս զգայ մեր քով: Արդեօք մեր երկնաւոր Հիւրին հետ ալ այսպէս կը վերաբերինք:

Մեր հիւրերը ոչ թէ միայն կ'առնեն մեզմէ, այլ շատ անգամ մեզի կուտան ալ: Երբ իմաստուն հիւր մը ունենանք մեր տան մէջ, մեր սիրտերը վստահութեամբ կը բանանք անոր առջեւ եւ խորհուրդ կը հարցնենք: Անոր կը յայտնենք մեր ընտանեկան նեղութիւնները եւ առեւտրական դժուարութիւնները եւ անիկա շատ մը շրջանիցիցի հարցեր կը լուծէ մեզի համար: Անոր տուած մէկ խորհուրդը շատ անգամ կ'ուղղէ անմիջական դատում մը եւ կ'արգիլէ դժան պատասխան մը, եւ անոր տուած մէկ խրատը յաճախ օգտակար եւ շահաւոր կ'ըլլայ մեզի: Իսկ մեր երկնաւոր Հիւրը՝ շնորհալի եւ սիրազեղ Ս. Հոգին՝ տալու համար միայն կուգայ: Ճշմարիտ է թէ կ'ուզէ որ մենք զԻնքը սիրենք եւ պաշտենք, սակայն Ինքը մեր Մխիթարիչն ու Փաստաբանն է, միշտ մեր կողքին կեցած՝ մեզի օգնելու: Անիկա կուգայ մեր սրտին մէջ բնակելու մեզ ամէն ճշմարտութեան առաջնորդելու եւ Հայրը մեզի ցուցնելու: Անիկա կուգայ «Որ տայ ձեզի Իր փառքին ճոխութեանը հափովը զօրութիւնով հաստատուիլ Իր Հոգիովը ներսի մարդուն

մէջ. որպէսզի Քրիստոս հաւատքով ձեր սիրտերուն մէջ բնակի, որպէսզի... կարենաք ճանչնալ Քրիստոսի սէրը որ գիտութենէ գերազանց է, որպէսզի լցուիք Աստուծոյ ամէն լրութիւնովը» (Եփես. Գ. 16-19):

Ահա մեզ այս հոգեւոր պարգեւներուն մասնակից ընելու բաղձանքով Անիկա մեր մէջ կը բնակի, սակայն մեզմէ շատերը կը մերժեն Անոր պարգեւները: Անիկա կ'ստիպուի մեզմէ ոմանց ըսել, «Բոլոր օրը իմ ձեռքերս երկնցուցի անհրաժեշտ ու հակառակող ժողովուրդի մը» (Հոով. Ժ. 21):

Ի՞նչ հիւր: Չկայ խնդիր մը այնքան կնճռոտ՝ զոր Անիկա չկարենայ կարգադրել, կամ դժուարութիւն մը այնքան բարդ՝ զոր Անիկա կարող չըլլայ հարթել: Անիկա կը հետաքրքրուի մեզի վերաբերեալ ամէն մէկ հարցով: Կ'ուրախանայ ամէն անգամ որ Իրեն խորհուրդ կը հարցնենք եւ մեր սիրտերն ալ ուրախութեամբ կը լեցնէ ամէն անգամ որ Իրեն կը հնազանդինք: Ամէն անգամ որ Անոր առաջնորդութիւնը մերժենք, կը սխալինք: Արդեօք որչա՞փ անգամ կրնանք կատարեալ վստահութեամբ ըսել, «Աղէկ երեւցաւ Սբ. Հոգիին եւ մեզի» (Գործ. ԺԵ. 28):

Տբ. Մօրկըն կ'ըսէ, «Աստուած մարդոց խոստացած չէ գալու եւ իրենց օգնելու որ Իր գործը տեւանեն, այլ անոնցմէ կը խնդրէ որ ինքզինքնին Իրեն նուիրեն Իր գործին համար: Ո՛րչափ արժէք որ ընծայենք մեր «Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքին» եւ «Աստուծոյ սիրոյն», նոյնքան պիտի օգտուինք «Հոգւոյն Սրբոյ հաղորդութեանէն»: Ճշմարիտ հաղորդակցութեան միակ պայմանը սակայն հնազանդութիւն է: Մեր մէջ բռնակող Սուրբ Հոգին մեզմէ կ'ակնկալէ եւ կը պահանջէ որ Իրեն բացարձակ իշխանութիւն տանք մեր կեանքերուն վրայ: Մասնակի հրպատակութիւն չընդունիր Անիկա: Ծօն Պընիլըն իրեն յատուկ ոճով եւ անմահ օրինակներով կը ցուցնէ թէ ինչպէս Սատանան կ'աշխատի մարդուն մէջ պզտիկ տեղ մը միայն գտնել եւ կը խոստանայ ամբողջ մնացած մասը Տէրոջը թողուլ: Եւ որչա՞փներ Սատանային այս փափաքին տեղի տալով կը զրկուին լեցուն օրհնութենէ եւ զօրութենէ: Տէր Յիսուսի բաղձանքն է որ Ինք միայն ըլլայ մեր սրտին հիւրը: Անիկա բացարձակ գերիշխանութիւն կը պահանջէ մեր վրայ: Չենք կրնար զօրութեամբ լեցուած քրիստոնեաներ ըլլալ մինչեւ որ մեր անձերը, մեր հոգիներն ու մարմինները ամբողջովին չյանձնենք մեր մէջ բնակող Հոգիին: Կ'ուզե՞նք անհուն ուրա-

խութեամբ, անվրդով խաղաղութեամբ եւ անպատմելի զօրութեամբ լեցուիլ, պայմանը անկեղծօրէն, «Տէր Յիսուս, ես ամբողջովին Քուկդ պիտի ըլլամ», որոշելն է:

Մենք մերինը չենք: Մենք գնով ծախու առնուած ենք, ուրեմն Անորն ենք որ մեզ ծախու առաւ: Մենք Անորն ենք: Ան ըլլալու է Իր տան Տէրը, «Որուն տունը մենք ենք» (Եբր. Գ. 6) եւ ոչ թէ միայն հիւրը:

Աւետարանիչ մը օր մը վաճառականի մը հարցուց, «Երբ իմանաս զործաւորներէդ մէկին մասին թէ կէս մը քու կողմէ եւ կէս մըն ալ մրցակիցիդ կողմն է, զայն որչա՞փ ժամանակ վաճառատանդ մէջ պահելու կը յօժարիս»: «Միւնչեւ որ անոր դիրքը հաստատեմ», պատասխանեց անմիջապէս: Յետոյ ցուցուց զրի առնուած կարգ մը պայմաններ զորոնք ստորագրողները միայն կրնային իր վաճառատան մէջ ընդունուիլ: Պայմաններուն ամփոփումն էր, «Ամբողջ ուժս եւ ազգեցութիւնս կը տրամադրեմ ձեզի»: Նոյնը կը պահանջէ նաեւ Աստուծոյ Սուրբ Հոգին մեզմէ: Մեր բոլոր տաղանդները, մեր ամբողջ ոյժը, մեր ամէն մէկ ծրագիրը եւ մեր ամբողջ կեանքը Անոր տրամադրելու ենք: Անվերապահօրէն Անոր նուիրելու ենք նաեւ մեր կամքը: Անիկա գիտէ թէ ի՞նչ է մեզի համար ամենէն աղէկը ու մեզ ամէն. ճշմարտութեան պիտի առաջնորդէ: Մենք Քրիստոսի նման կրնանք համարձակութեամբ ընել, «Ձիս զրկողը Իմ հետս է, զիս միւնակ չթողուց», բայց արդեօք Անոր նման կըրնանք նաեւ յարել, «Ես միշտ Անոր հաճելի եղած բաները կ'ընեմ» (Յովհ. Ը. 29):

Անիկա կարող եւ պատրաստ է զմեզ Իր առատ շնորհքովը ողողել: Կարող է «Առատութեամբ ընել ամէն բաներէն աւելի զոր մենք կը խնդրենք կամ կը խորհինք, այն զօրութիւնովը որ մեր մէջ կը ներգործուի» (Եփես. Գ. 20): Ի՞նչ մեծ յիմարութիւն պիտի ըլլար զԱյն վըշտացնել, Անոր դիմադրել ու չհնազանդիլ:

«Արդ կ'աղաչեմ ձեզի եղբայրներ, Աստուծոյ զարմանալի ողորմութիւնովը, որ ձեր մարմինները ընծայէք կենդանի զոհ մը՝ սուրբ, Աստուծոյ հաճելի, որ է ձեր բանաւոր պաշտօնը» (Հո. ԺԲ. 1):

Սակայն ոչ մէկ մարդ իր անձին կ'ապրի: Մենք չենք կրնար զօրութեամբ լեցուած քրիստոնեաներ ըլլալ, եթէ մեր յարաբերութիւնը ուրիշներու հետ ուղիղ չէ: Եթէ մեր մէջ դառնութեան արմատ մը գոյութիւն ունի: Աշակերտներուն միաբանութեամբ միատեղ հաւաքուելէն

վերջն էր որ Տէրը կրցաւ իր յարութեան օրը անոնց երեւնալ: Կարծես թէ ամբողջ օրը իր ցիրուցան հետեւորդները մէկտեղ բերելու ջանալով անցուց: Անոնք ալ մարդ էին, եւ «Սուրբ Հոգին տակաւին տրուած չէր»: Չենք զարմանար որ անոնք բարկացած էին Պետրոսին՝ երգումով ու անէծքով Տէրը ուրանալուն համար: Ոչ ալ կրնանք զարմանալ որ կրնէրը արհամարհանքով անոր նայէին: Գալով Պետրոսին՝ անիկա ոչ թէ միայն մոռյլ տխրութեամբ համակուած էր, այլ չէր համարձակեր նոյնիսկ ինքզինքը աշակերտներէն մէկը նկատել այլեւս: Նաեւ Կղէնպաս եւ իր ընկերը կարծես թէ բոլորովին յուսահատած՝ Քրիստոսի գործը ձգելու վրայ էին: Չէ՞ որ Անոր մահը ամէն բան քայքայած էր: Աշակերտները կրկին հաւաքուելու էին, սակայն ոչ թէ ստիպմամբ, այլ Անոր սիրոյն մէկ նոր շնորհալի յայտնութեամբը:

Մարիամ Մակտաղեանացին, որուն ամենէն շատ ներուելուն համար՝ ամենէն շատ կը սիրէր, շատ բարկացած ըլլալու էր Պետրոսին, քանզի սէրը վախը կ'արհամարհէ ու հակամէտ է ուրիշներու ցոյց տուած երկչոտութեան՝ անարգանքով նայելու: Տէրը ճիշդ գայն կ'ընտրէ Պետրոսին լուր տալու թէ Ինք յարութիւն առած է եւ անոր ներած է: Հրեշտակին խօսքէն՝ «Գացէք ըսէք Անոր աշակերտներուն եւ Պետրոսին» (Մարկ. ԺԶ. 7) այդպէս կը հասկցուէր: Հրեշտակը անձամբ կրնար Պետրոսին ըսել, սակայն Մարիամ զաս մը ունէր սորվելիք: Քրիստոս ներած էր Մարիամի բոլոր մեղքերը, եւ մենք չենք խորհիր թէ Աստուած թուլատրած պիտի ըլլար որ եօթը դեւեր անոր տիրանային, եթէ անիկա զանոնք քաջալերելու հակամէտ եղած չըլլար: Անիկա յայտնապէս նաեւ ներած էր Պետրոսին, ուրեմն Մարիամ ի՞նչպէս կարող էր չներել խեղճ Սիմոնին: Անոր սիրտը կրկին սիրով կը լեցուի Պետրոսի հանդէպ ու կը փութայ հրեշտակին հրամանը կատարելու: Եւ այն ատեն, ու միայն այն ատեն է որ Յիսուս անոր կ'երեւնայ: Որչափ ժամանակ որ մենք սիրոյ հակառակ զգացում կը տածենք մեր եղբայրներուն հանդէպ, մեզի կարելի չէ մեր յարուցեալ ու համբարձեալ Տէրոջը ղէմքը տեսնել, հոգ չէ թէ որչափ ալ որ անոնք Աստուծոյ եւ մեզի հանդէպ մեղանշած ըլլան: Վերջապէս Տէրը բոլոր առաքեալները եւ անոնց խումբին վերաբերող կիները իրարու հետ հաշտեցնելէ վերջն էր միայն որ անոնց խումբին երեւցաւ: Այն ատեն միայն կարող եղաւ ըսել, «Խաղաղութիւն ձեզ» եւ «Առէք Հոգի Սուրբ»:

Նոյնպէս էր նաեւ Պէնտէկոստէին: Միաբանութեամբ, մէկ տեղի մը մէջ հաւաքուելէն վերջ էր միայն որ Ս. Հոգին անոնց վրայ իջաւ: Եթէ մէկը Աստուծոյ կամ ոեւէ մարդու մը հետ խաղաղութիւն չունի, չկրնար վերէն զօրութեամբ լեցուիլ: Տէրը կը պատուիրէ, «Խաղաղութեան ետեւէ եղէք ամենուն հետ», եւ յետոյ կը յարէ, «Եւ սրբութեան, որ առանց անոր մէկը պիտի չտեսնէ Տէրը» (Եբր. ԺԲ. 14): Ուրիշներու հանդէպ ատելութեան եւ զգուանքի հոգի մը կրելը անտարակոյս արգելք կ'ըլլայ զօրութեամբ լեցուելու: Որչափ որ մեզի կ'իյնայ մենք խաղաղութեամբ ապրելու ենք ամէն մարդու հետ:

Ոչ ալ բացառութիւն մը սեպելու ենք այն մարդիկը որ սխալ հաւատքի մը կը հետեւին: Կրօնական հակառակութիւնը խիստ դառն հանգամանք կրնայ առնել: Այդ սխալ է: Մենք թէպէտեւ ատելու ենք անոնց սխալ վարդապետութիւնները, սակայն զանոնք սիրելու ենք: Անոնց համար աղօթելու ենք: Աղօթքը մեծ դեղութիւն մըն է: Քրիստոսեայ գործիչներու մէջ շատ անգամ նախանձ, բամբասանք, խիստ քննադատութիւն, չարախօսութիւն, փոքրիկ խօսքերու կամ գործերու չափազանցութիւն եւ շարժառիթներու սխալ մեկնութիւններ կ'երեւնան, որոնք բոլորը ատելութեան նշաններ են եւ արգելք կ'ըլլան անոնց Սուրբ Հոգիով լեցուելուն:

Օր մը մէկի մը հանդիպեցայ որ բացարձակապէս Տէր Յիսուսի նուիրուած աղօթքի մարդ մը կ'երեւէր եւ որուն կեանքը լեցուն էր բարեգործութիւններով: Երեւութապէս սրտով սուրբ եւ խոնարհ մէկը կը թուէր, որ միմիայն Աստուծոյ փառքը կը փնտռէր: Թէպէտեւ անոր կեանքը, շատ մը տեսակէտներէ հիացում կ'առնէր եւ անոր վրայ կարելի չէր որեւէ թերութիւն նշմարել, սակայն մարդ անոր ներկայութեան Պօղոսի Եփեսացիներուն ուղղած հարցման նման հարցնելու կը մղուէր, «Երբ հաւատացիք, Ս. Հոգին առի՞ք» (Դործ. ԺԺ. 2): Օր մը երբ միասին կը խօսէինք, անիկա ինքզինքը մատնեց: Փոքրիկ դժուարութիւն մը կ'զգար անհատի մը հանդէպ որ իրեն ամենէն լաւ բարեկամը եղած էր: Արդ, այս անձնուէր մարդուն համար ի՞նչ օգուտ ունէր Յաղթական Կեանքին զաղտնիքը փնտռել, կամ ժամերով ծունկի վրայ դնուելով Սուրբ Հոգիին լեցունութիւնը խնդրել: Օրհնութեան արգելքը բուն իր սրտին մէջն էր: Աստուած ստիպուած էր անոր ալ ըսել «Ձեր մեղքերը բարիքը ձեզմէ արգիւցցին» (Երեմ. Ե. 25):

Մենք բոլորս ալ այս կարգի մեղքեր գործած ենք: Մեզի հանդէպ գործուած ամէն մէկ յանցանք համբերութեամբ կրելու ենք մենք: Աստուծոյ հետ շտկուելու համար նախ շտկուելու ենք մեր գործակիցներուն հետ:

Պետրոս Առաքեալ ընտրուածներուն (Ա. Պետ. Ա. 4) գրած միջոցին անհրաժեշտ կը սեպէ մէջ բերել Սաղ. 12, «Ան որ կ'ուզէ կեանքը սիրել եւ բարի օրեր տեսնել, իր լեզուն թող դադրեցնէ չարութենէ ու իր շրթներէն չենդուրս խօսելէ... խաղաղութիւն փնտռէ եւ անոր հետեւէն երթայ» (Ա. Պետ. Գ. 10, 14): Մենք ալ տակաւին անհրաժեշտ կը սեպենք ընտրեալներուն կրկնել այս յորդորը: Տէրը տայ որ վերէն զօրութիւն ստանալու այս արգելքն ալ վերցուի մեր կեանքերէն:

ՀՈԳԻԻ ՄԸ ԱՃՈՒՐԴԻ ԴՐՈՒԻԼԸ

Հոգեկաւոր Անգլիացի քարոզիչ Րօլէնտ Հիլ օր մը Անգլիոյ մեծ քաղաքներէն մէկուն մէջ կը քարոզէր: Մօտէն և հեռուէն մեծ բազմութիւն հաւաքուած էր զայն մտիկ ընելու, Քարոզի կիսուն կառք մը կեցաւ եկեղեցիին դրան առջեւ և կառքէն վար իջաւ Լէյտի Էրսքին, ազնուական դասէն կին մը որ քաղաքին մէջ հանրածանօթ էր մանաւանդ իր մեծ հարստութեամբը եւ պոռոտ աշխարհիկ կեանքովը: Չկար պարասրահ մը, նուագահանդէս մը կամ թատրոն մը ուր նա ներկայ չըլլար. բայց շատ քիչ անգամ կը տեսնուէր եկեղեցւոյ մը կամ աւետարանչական ժողովի մը մէջ: Յաճախ նա լսած էր Րօլէնտ Հիլի վրայօք եւ հիմա եկած էր անձամբ անոր քարոզը մտիկ ընել՝ միայն ժամանցի դիտումով:

Իր քայլուածքին կամ փառաւոր հագուստին խշրտուքին պատճառաւ իր մուտքը բոլոր ժողովուրդին ու քարոզիչին ուշադրութիւնը գրաւեց: Րօլէնտ Հիլ կը ճանչնար այս կինը. յանկարծ կայծակի արագութեամբ խորհաւոր մ'անցաւ իր միտքէն, «Ահաւասիկ աննման պատեհութիւն մը այս հոգիին օգտակար ըլլալու» ըսաւ նա եւ իր պատգամը կիսատ ձգելով՝ բարձր ձայնով կանչեց, «Ահաւասիկ Լէյտի Էրսքին, եկէ՛ք զանիկա աճուրդով (մէլլաւ) ծախենք»:

Կնոջ զարմանքը աննկարագրելի էր, և երբ բոլոր աչքերը իր վրայ դարձան՝ ամօթահար դետնին ներքեւը մտնել ուզեց: Բայց կարելի չէր քայլ մ'անգամ ետ երթալ: Արդէն քարոզիչը խօսքը ժողովուրդին ուղղած էր, «Ո՞վ կ'ուզէ Լէյտի Էրսքինին հոգին ծախու առնել»:

Ո՞վ աշխարհ, դուն ի՞նչ կուտաս:

—«Ես կուտամ իմ ձեռքս եղած բոլոր փառքը եւ շքեղութիւնը, պատիւ եւ մեծարանք. հանգստաւէտ կեանք եւ զուարճալի օրեր»:

Այդչա՞փ միայն. անմահութենէն բան մը չկա՞յ, յաւիտեանական կեանք չկա՞յ»:

—«Ես ինքս չունիմ զայն»:

«Ուրեմն քու գինդ շատ ցած է ո՞վ աշխարհ. քեզի չեմ ծախեր զայն, քանզի ի՞նչ կը շահի Լէյտի Էրսքին՝ եթէ բոլոր աշխարհը վաստկի եւ իր անձը կորսնցնէ»:

Եւ դուն Սատանայ, ի՞նչ է քու գինդ

—«Ես անոր կուտամ մարմնի ցանկութիւնը ու աչքերու ցանկութիւնը եւ այս կեանքին ամբարտաւանութիւնը: Անոր թոյլ կուտամ իր կամքը ընել, իր փափաքները եւ իր ցանկութիւնները գոհացնել ու այս աշխարհի հաճոյքներուն զաւաթը մինչեւ յատակը քամել»:

«Եւ ի՞նչ կը պահանջես ատոնց փոխարէն»:

—«Անոր հոգին՝ ամբողջութեամբ»:

«Գինը չափէն աւելի բարձր է Սատանայ. քեզի ալ չեմ ծախեր. վասնզի դուն սկիզբէն ի վեր մարդասպան, ստախօս եւ ստութեան հայր ես»:

Տէր Յիսուս, ԴՈ՞ՒՆ քանի կուտաս:

—«Ես արդէն իմ կեանքս տուի Լէյտի Էրսքինի համար. իմ սիրտս անոր համար արիւնեցաւ, երբ խաչին վրայ ամբողջ աշխարհի փրկեալները վճարեցի: Ես անոր հոգին ամէն միտքէ վեր եղող խաղաղութիւնով պիտի լեցնեմ: Ես անոր պիտի տամ այնպիսի ուրախութիւններ՝ զորս այս աշխարհս ոչ կրնայ տալ եւ ոչ ալ իր մէջ առնել: Ես զայն պիտի հագուեցնեմ արդարութեան մաքուր ու լուսափայլ բեհեզով և զայն պիտի զարդարեմ հաւատքի ոսկիով: Ես զայն պիտի պաշտպանեմ թանկագին գանձի մը պէս, եւ մէ՛կը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ զայն: Ու երբ նա իր հաւատքի ընթացքը վերջացնէ, զայն քովս փառքի մէջ պիտի առնեմ. քանզի Ես ուր որ եմ, իմ ծառաս ալ հոն պիտի ըլլայ»:

«Եւ այս փառաւոր պարգեւներուն փոխան ի՞նչ կը պահանջես»:

—«Անոր մեղքերը, իր չար խղճմտանքը, ամէն ինչ որ զայն ներքնապէս կը տանջէ ու կը չարչարէ. ահաւասիկ իմ պահանջս»:

«Դուն շահեցար Տէր Յիսուս. Քուկդ է ան եւ Քուկդ պիտի մնայ միշտ եւ յաւիտեան»:

Լէյտի Էրսքին, համամիտ ես:

«Այո», պատասխանեց կինը բարձր եւ հաստատ ձայնով:

Եւ Լէյտի Էրսթին իր խոստումը բռնեց: Այն վայրկեանէն սկսեալ անոր բնութիւնը եւ կեանքը բոլորովին փոխուեցան: Նա պերճանքը ձգեց եւ աշխարհիկ ընկերութիւններէն եւ կեղտոտ հաճոյքներէն հրաժարեցաւ: Նա բոլոր աղքատաց, հիւանդներուն, թշուառաց եւ դժբաղդներուն մայր եւ բարեկամ դարձաւ: Այն օրէն սկսեալ այն շրջաններուն մէջ չգտնուեցաւ մէկը որ Յիսուս Քրիստոսի գործին համար այս նախկին աշխարհիկ կնոջմէն աւելի եռանդ ունենար, եւ իր կեանքը Անոր զոհէր այնքան կատարեալ անձնութեամբ: Նա անդադար Աստուծոյ փառք կուտար՝ զինքը փնտռած, ժողովին բերած եւ այնքան հզօր ձեռքով աշխարհի եւ Սատանայի ճանկերէն ազատած ըլլալուն համար:

«Եթէ Որդին ձեզ ազատ ընէ, ճշմարտապէս ազատ պիտի ըլլաք» (Յովհ. Ը. 36):

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Ոչ մէկը սրբութեան գերազոյն արուեստը կիրարկել պիտի գիտնար՝ առանց նախ եւ առաջ ընդունելու Յիսուս Քրիստոսի փառաւոր արդարութիւնը: Այդ կը սորվեցնէ Պօղոս, երբ կ'ուզէ մեզի իմացնել թէ ինչպէ՞ս մեղքին մեռնելու եւ Աստուծոյ ապրելու վիճակին կը հասնինք: Ահա թէ ինչպէս կ'արտայայտուի, «Ձեր անձերը մեղքին մեռած սեպեցէք, բայց Աստուծոյ կենդանի, մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով» (Հռ. 2. 11):

Այս տեսութիւնը համաձայն չէ տրամաբանութեան: Մարդկային իմաստութիւնը կ'ըսէ, «Թօթափէ քեզմէ քիչ քիչ մեղքին կապերը, սորվէ հետզհետէ զԱստուծոյ սիրել եւ Անոր հաճար ապրիլ»: Բայց այս կերպով բնաւ արմատապէս վերջ չենք տար մեղքին ու ինքզինքնիս բոլորովին չենք յանձնել Աստուծոյ: Կը մնանք մեղքին բնութեան աղօտ ու շփոթ մթնոլորտին մէջ եւ չենք հասնիր աստուածային սրբութեան բացարձակ պայծառութեանը:

Հաւատքը՝ ընդհակառակը՝ ուստուսի ձեռով մեզ կը սլացնէ արքունական գիրքին որուն Յիսուս Քրիստոս կը տիրէ հիմայ եւ որ Անոր միջոցաւ մերն ալ է արդէն: Այդ վիճակին մեր մեղքերը մեր ոտքերուն տակ կը տեսնենք. հոն, Աստուծոյ կեանքը մեր իսկական էութեանը պէս կ'ըմբռնենք Յիսուս Քրիստոսով:

Տրամաբանութիւնը կ'ըսէ, «Սուրբ եղի՛ր, սուրբ ըլլալու համար»: Հաւատքը կ'ըսէ, «Դուն

սուրբ ես, սուրբ եղի՛ր ուրեմն: Քրիստոսով սուրբ ես, անձովդ ալ եղի՛ր»: Կամ ինչպէս Պօղոս կ'ըսէ Կողոսացւոյ (Բ. 3-5) «Դուք մեռած էք, ուստի սպաննեցէք ձեր երկրաւոր անդամները»:

Հաւանաբար հոգ է աւետարանական ճշգրիտ աւանդութեան այժմէութիւնը. ան որ կը ժխտէ կամ կը մերժէ զայս, քրիստոնէական սրբութեան շէմէն երբեք պիտի չկրնայ անցնիլ:

Կարելի չէ տակաւ առ տակաւ ազատուիլ մեղքէ. անոր հետ մեր կապը կը խզենք կատարելապէս ապաւինելով Քրիստոսի խաչին վրայ կատարած գործին: Աստիճանաբար չենք բազմիր վահու մը վրայ, հապա մէկ անգամէն կը զահակալենք՝ Քրիստոսով, մեզ Քրիստոսի միաւորող հաւատքի գործողութիւնով:

Յետոյ այդ սուրբ գիրքին բարձունքէն տիրապետելով կը յաղթանակենք «ես»ին, աշխարհի, Սատանայի եւ չարին բոլոր գործութիւններուն:

Այս պայմանաւոր սրբութեան վիճակովն է որ կը նորոգուինք Աստուծոյ Որդւոյն աստուածային ու մարդկային բնութեանը միաժամանակ:

F. Godet

Թարգ. Տ. ԿԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

ԳԻՐԲ ԵՂԻՑ

(Մաս Բ.)

Սկսեալ Իսրայէլի ազատագրութեան պատմութենէն, Ելից գիրքը իր խորքին մէջ փրկագործութեան գիրքն է: Պաշտամունք եւ ծառայութիւն անոր յարակից մասերն են: Ուստի «Ելից»ը, Օրէնքը, զոհերը եւ քահանայութիւնը սահմանելով ոչ միայն փրկագործութեան գիրքը կ'ըլլայ, այլ նաեւ կը բացատրէ այն պայմանները որով կարելի է Աստուծոյ հետ յարաբերութեան մտնել:

Աստուած մարդկային ազգին պատմութեան հետ կը խառնուի: Ելից գիրքը այս մերձեցման յայտնութիւնը կը բերէ: Բնականաբար այս պատմութեան մէջ Աստուծոյ եւ մարդոց գործերը տարբեր են: Մարդոց կողմանէ յաճախ տկարութիւն եւ ձախողութիւն կը տեսնուի: Մովսէսի վախճանը հեռի պիտի ըլլար այնքան օրհնեալ ըլլալէ եթէ Տէրը Իր կողմէն յաղթութիւն չպարգեւէր անոր: Ահարոն միշտ կը ձախողի. ժողովուրդը տկարութեամբ եւ անարժանութեամբ

պաշարուած կը տեսնուէի: Այս կ'երեւի ի մասնաւորի երբ կը նկատենք թէ Իսրայէլ որքա՛ն աւարտան եղաւ իր կոչմանը, որպիսի՝ թեթեւութեամբ առաջադրեց «Եհովային բոլոր ըսածը կատարել», եւ թէ ինչպէս նոյնքան դիւրութեամբ ոտնակոխեց Աստուծոյ սուրբ օրէնքը թէն պատուիրանքը սուրբ, արդար եւ բարի է»:

Իսկ Աստուծոյ կողմէ համբերութիւն ու զօրութիւն ցոյց կը արուի, որով Տէրը անսպախաք եւ անխափան կը քալեցնէ Իր ծրագիրը, իրագործելու համար Իր կամքը: Աստուած Իր էութեան եւ միտքին մէջ բացարձակ է, ոչինչ կրնայ խոտորեցնել կամ չափաւորել Իր ընթացքը, ոչ իսկ Իր գործակիցներուն ֆիզիքական, բարոյական կամ հոգեւոր սահմանափակումները: «Այսպէս, զրքին գլխաւոր արժէքը այս իրողութեան յայտնութեան մէջ է թէ մարդկային յառաջդիմութիւնը միշտ Աստուծոյ համբերութեան եւ շնորհքին արդիւնքը եղած է»: (Տր. Մօրկլըն):

X

Աստուծոյ ծրագրին գործադրութեանը համար անհրաժեշտ էր Իսրայէլի ընտրութիւնը: Կ'արժէ անմիջապէս շեշտել որ այս ընտրութիւնը լիկ Իսրայէլի սիրոյն համար էլի: Երբե՛ք: Աստուած աշտուութիւն չընէր. ան սահմանափակ չէ: Անոր միտքը ու գործունէութիւնը տիեզերական եւ յաւիտենական են: Իսրայէլի ընտրութեամբ Աստուծոյ նպատակն է ստեղծել ազգ մը, անոր յանձնելու համար վկայութիւն մը, ուրիշ ազգաց տարուելու համար: Եհովա Իսրայէլը Իր անմիջական իշխանութեան եւ պաշտպանութեան տակ առնելով կ'ուզէր ուրիշ ազգաց ցոյց տալ աստուածային կառավարութեան առանձնաշնորհումը. կ'ուզէր որ մարդիկ ճանչնային Աստուծոյ թագաւորութեան նշանակութիւնը: Մէկ խօսքով Իսրայէլ իր կոչումին բարձրութեան վրայ եւ իր լաւագոյնին մէջ պիտի ներկայացնէր աստուածային մտքին յղացած Օրինակը: Այս նպատակին է որ կցուած է մեր զրքին մէջ կարեւոր տեղ բռնող իրողութիւն մը

Աստուծոյ անուան

աստիճանական յայտնութիւնը: Այս կը նշանակէ Իր էութեան յայտնութիւնը: Իսրայէլ չէր կրնար ներկայացնել զԱստուած առանց իրական աստուածագիտութեան մը: Սակայն ան ընդունակ չէր մէկ անգամէն հիմնովին ճանչնալու զԱյն զՈր պիտի պաշտէր եւ Որուն պիտի ծառայէր: Իսրայէլի հոգեւոր ընդունակութիւնները ոչ բաւական նուրբ ո՛չ ալ բաւական հասուն էին մէկ անգամէն թափանցելու «Ուխտի Աստուծոյն» էութեան

նը: Այս պատճառաւ ալ Տէրը կ'որոշէ Ինքզինքը յայտնելու Իր անուան աստիճանական յայտնութիւնովը: Կարելի է հետեւեալ կերպով դասաւորել այս աստիճանաւորումը:

Ա) Առաջին անգամ այրող Մօրենիին մէջէն Աստուած Ինքզինքը կը յայտնէ իբր «ՈՐ ԷՆ»-ը (Ելից Գ.). հոս վեհափառ վայելչութեամբ լեցուն է, որուն առջեւ մարդ միայն պաշտամունքով կրնայ կենալ:

Բ) Քիչ յետոյ Աստուած կը բացատրէ այդ անուան արժէքը: Երբ Մովսէսի կը խոստանայ Իր բարձր բազուկովը ժողովուրդը գերութենէ դուրս, «Կաթ ու մեղր բղխող» երկիրը մտցնելու: Այս տեղ կ'երեւի որ «ՈՐ ԷՆ» ամենաբաւարար Աստուածն է որ Իր ժողովուրդին համար կրնայ ամէն ինչ ըլլալ՝ պարագաներուն վրայ ներդրածելով հզօր միջամտութեամբ մը:

Գ) Երբ պիտի սկսէր կազմակերպչական գործը, Տէրը կը յայտնուի իբր շնորհքի Աստուածը, «Դուք Ինծի սեփական ժողովուրդ պիտի ըլլաք, ամէն ազգերէն... եւ դուք քահանաներու թագաւորութիւն մը ու սուրբ ազգ մը պիտի ըլլաք» (Ելից ԺԺ. 5-6):

Դ) Անմիջապէս յետոյ կը յայտնուի իբր Օրէնքի Աստուածը: Ժողովուրդը լաւ չհասկցաւ որ շնորհքի Աստուածը նաեւ անմերձեանալի էր Իր սրբութեանը մէջ: Մոռցան նաեւ իրենց բարոյական տկար վիճակը եւ կարծեցին որ կրնան «Տէր»-ը բոլոր ըսածը ընել: Բայց մինչ Սինա կը մխար Տէրը շնորհայութենէն եւ ամենհի հնոցի մը փոխուած էր, ու մինչ սարսուռացող լեռան միգապատ գագաթէն կը հնչէր փողին ձայնը, ժողովուրդը հրաման չունէր լեռը ելլելու կամ անոր ծայրին դպչելու:

Ե) Բայց յայտնութիւնը կը շարունակուի: Մովսէս Իսրայէլէ ընտրեալ ձերերուն հետ կը մտնէ Աստուծոյ ներկայութեան: Տէրը «Ընտրեալներուն վրայ Իր ձեռքը չերկնցուց» եւ անոնք կերան ու խմեցին Անոր ներկայութեան: Այսպէսով Տէրը գիտցուց թէ Ինք նաեւ անձնաւորութիւն մ'է: Ծերերը հասկցան զայս՝ առանց սակայն կարենալու լման բացատրել իրենց տեսածը: Բայց այս խորհրդաւոր հանդիպումն իսկ տակաւին լրիւ չէր բացատրեր Անոր Անձը: (Ելից ԻԴ):

Չ) Աւելի ետքը ժողովուրդին օգտին համար Եհովա Մովսէսի կը յայտարարէ Իր իսկական բնոյթին փառքը հետեւեալ անգուգական հատուածին մէջ, «Տէր, Տէր Աստուած, ողորմած ու բարեբար, երկայնամիտ եւ առատ ողորմութիւնով ու ճշմարտութիւնով, հազարներուն ողորմու-

թիւն ընող, անօրէնութիւնը, յանցանքը ու մեղքը ներող, բայց յանցաւորը ամենեւին անպարտ չլծողուր, հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ ու որդւոց որդիներուն վրայ մինչև երրորդ ու չորրորդ ազգը հատուցանելով» (Եւ. ԼԴ. 6-7):

Է) Ի վերջոյ՝ երբ խորանը բոլորովին լրացաւ յար եւ նման աստուածային օրինակին՝ Տէրը ինք իր մեծավայելչութեան փառք լեցուց զայն իր հաճութեան կնիքը դնելով անոր վրայ: Մովսէս եւ քահանաները չէին կրնար հոն մտնել, զի Աստուած զբաւած էր իր սրբարանը, բան մը եւս ցոյց տալով իր էութենէն, այս անգամ՝ յայտնուելով իբր «Փառաց Աստուածը»:

X

Այսպէս Աստուած ինքզինքը յայտնելէ յետոյ ալ իր գործակից անհատին ու ազգին կրնայ լըծուիլ իր կոչման յարակից պարտականութեանց: Որպէսզի իր վկաները կարենան ճշմարտապէս ներկայացնել զինքը, Տէրը կը հաճի իր տուած օրէնքովը մտնել ժողովուրդին կեանքին բոլոր մանրամասնութեանց մէջ: Ամէն բան վերին իմաստութեան եւ փափաքին համեմատ է: Իսկ անհատին ու ժողովուրդին պարտքն է նախ պաշտել զԱյն: Այս կը նշանակէր որ Տէրը կեանքին մէջ կեդրոնական տեղը պիտի ունենար: Գերիշխան պիտի ըլլար, ամէն տան եւ ամէն բանի մէջ: Այսպէսով անհատին ու ժողովուրդին կեանքը հայելիի մը նման ցոյց պիտի տար ուրիշներու համար «Անձանօթ Աստուծոյն» բնոյթն ու զեղեցկութիւնը: Կարելի չէ անտեսել որ այսպիսի կոչում մը միայն հնազանդութեան հիման վրայ կարելի է իրականացնել: Բացարձակ եւ անվերապահ հնազանդութիւն մը յայտնուած կամքին, որպէսզի Աստուած կարենար իր գործին մէջ ներգործել «Կամենալն ու ընելը իր հաճութեանը եւ փառքին համար»:

Բնաւ սպառած չենք «Ելից»ի պարունակած խորհրդածութիւնը, բայց կ'առաջադրենք եզրակացնել շեշտելով հետեւեալ մի քանի կէտերուն վրայ որք մեր զրքէն բղիւսած գործնական դասերն են:

Պաշտենք զԱստուած: Ան գերիշխան է ու արդար իր նպատակին ու ծրագրին մէջ: Պաշտենք զԱյն իր իմաստութեան եւ զօրութեանը համար:

Երբ Աստուծոյ խօսքին լուսովը քննենք մեր պաշտամունքին մտերիմ կեանքը, երբ մեր աչքին առջեւ ունենալով «Ելից»ի մեզի ներկայացուցած Աստուածը իր սրբութեան զեղեցկութեան եւ անճառելի կատարելութեան մէջ, ինչ արժէք

կը ներկայացնէ մեր պաշտամունքի փորձառութիւնը: Շիտակ չէ՞ ըսել, որ աստուածապաշտ կոչուածներու պաշտամունք կարծածը, կ'անհետանայ ու կը ցնդի այս լոյսին տակ: Պաշտամունք կրնա՞նք սեպել, երբ սրտին մէջ քով քովի դնել կ'ուզենք խաւարն ու լոյսը, մեղքն ու արդարութիւնը, ես-ն ու Աստուած: Բայց անդարմանելի եւ յաւիտենապէս անիծեալ սխալ մը պիտի ըլլար այս էական կէտին մէջ անորոշ կամ երկբայելի վստահութիւն մը ունենալը:

Յարգ քու հոգեւոր կեանքիդ եւ ապահովութեանդ վրայ ունեցած վստահութիւնդ չի՞ խախտիր արդեօք. եւ այսօր չե՞ս զգար զայն: Եթէ այո՛, վախցիր, զի մեծ է վտանգդ, բայց նաեւ դարձիր, ետ եկուր Աստուծոյ: Թոյլ տուր որ Ինք միայն լեցնէ քու կեանքդ: Այս մտերիմ դատաստանդ կրնայ սկսիլ Սինա լեռան ստորոտը եւ վերջանալ Գողգոթայի կատարը, ուր Աստուած կը յօժարի գտնել եւ ընդունիլ ամէն ոք որ կը տենչայ «Հոգիով եւ ճշմարտութեամբ պաշտել» զինքը:

Ներելի չէ, բնաւ, անտարբեր, չեզոք կամ կրաւորական դիրք բռնել: Յիշէ Փարաւոնը որ հետզհետէ արհամարհեց Աստուծոյ անչափ քաղցրութիւնը եւ համբերութիւնը, մոռնալով որ «Աստուծոյ քաղցրութիւնը դէպի ապաշխարութիւն կ'առաջնորդէ»: Ասոր փոխան Աստուած լքեց փարաւոնը, որ յետ այնու որոշ քայլերով գնաց ու գտաւ իր կործանումը: Աներեւակայելի անէծք մ'է խոստարտութեան պատճառաւ Աստուծոյ լքուիլը:

Իսկ դուն, սիրելի ընթերցող, որ ընդունած ես Աստուծոյ ծառայութեան լուծը, քու գործդ դիւրին չէ բնաւ: Տե՛ս Փարաւոնի կողմէ Մովսէսի եղած դիմադրութիւնը: Մեծ է անոր իմաստը եթէ հոգեւոր առումով քննենք զայն: Փարաւոնի դիմադրութիւնը հետզհետէ կը ձգտի հարուածել Աստուծոյ գերիշխանութիւնը: Պաշտամունքին հոգեւոր սկզբունքները եւ ի վերջոյ Տէրովը ժառանգութիւնը: Այս դիրքին փոխան Աստուած ազամանդի պէս կարծրացուց հեզամբոյր Մովսէսի ճակատը, մինչեւ որ յարատեւ եւ հաստատ դիմադրութեամբ մը Իսրայէլի «Փրկիչ»ը եղաւ:

Աստուծոյ ծառայողներուն շուրջ միշտ փարաւոններ կան: Անոնք միշտ կ'աշխատին կաշկանդելու մեր հոգեւոր ազատութիւնը: Այս նեղութիւններուն համբերենք Քրիստոսի բարի զինուորի մը պէս: Սպառազինուրէնք լուսոյ գէնքերովը, ու հետեւելով «Հաւատարիմ վկային» քայլերուն՝ յառաջ երթանք «Աստուծոյ գօրութիւն ա-

ռած ամբողջներ քակելու... եւ Աստուծոյ գիտութեան դէմ հպարտացած բոլոր բարձր բաները, ու բոլոր միտքերը Քրիստոսի հնազանդութեան գերի ընենք»:

Փարիզ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱՆ

Բ. ՊԵՏՐՈՍ ՅԻՍՈՒՍԻ ԴՊՐՈՅԻՆ ՄԷՋ

Շատ դիւրին է հետեւիլ Յիսուսի, երբ մեզի կ'ընկերակցի մեծ բազմութիւն մը, որ Անոր «Ովսաննա՛, ովսաննա՛», կ'աղաղակէ, բայց դժուար է Անոր հաւատարիմ մնալ, երբ Ան բոլորէն կ'արհամարհուի եւ երբ Անկէ կը բաժնուին նոյնիսկ հաւատարիմ կարծուածներ: Պետրոսի դաւանութիւնը (1) կ'ապացուցանէ թէ անիկա յաղթած էր այդ դժուարութեան: Ինչպէս ան նախապէս իր ամէն ունեցածը թողելով Յիսուսի աշակերտած էր, այժմ ալ Անոր դպրոցին մէջ սորված էր զԱյն իբր Մեսիա եւ իբր կենդանի Աստուծոյ Որդին ընդունիլ, հակառակ Անոր խոնարհութեան եւ փարիսեցիներէն, քահանաներէն եւ զրեթէ ամբողջ Իսրայէլէն մերժուելուն: Սորված էր Անոր հետեւիլ, եթէ բոլոր մարդիկ զԱյն լքէին ալ, քանզի Անիկա «Յաւիտեանական կեանքի խօսքեր» ունէր (Յովհ. Զ. 69, 70): Պետրոսի համար այս արդէն մեծ յառաջդիմութիւն էր, Յիսուսի դպրոցին մէջ. ուստի իր Վարդապետը կրնար զայն աւելի բարձր կարգի մը մէջ դնել, անոր կաթի տեղ հաստատուն կերակուր տալ, աւելի խոր բաներ սորվեցնել եւ ցուցնել թէ «Պէտք է որ ինք երուսաղէմ երթայ եւ շատ չարչարանքներ կրէ ձերերէն, քահանայապետներէն ու դպիրներէն եւ սպաննուի ու երրորդ օրը յարութիւն առնէ» (Մատթ. Զ. 21):

Սակայն այս դասը Պետրոսի համար դեռ շատ դժուարըմբռնելի էր, քանզի ան թէեւ սորված էր՝ իբր աստուածային կարգադրութիւն մը ընդունիլ Մեսիային ժամանակաւոր խոնարհութիւնը, բայց դեռ չէր ընդունել թէ Անիկա պիտի սպաննուի եւ... Իսրայէլի բարեպաշտ առաջնորդներու ձեռքով: Ընդհակառակն անոր հաստատուն հաւատքն էր թէ Յիսուս՝ ատեն մը անշուքութեան մէջ ապրելէ յետոյ՝ թշնամիներուն պիտի յաղթէր, ամբողջ Իսրայէլէն պիտի ընդունուէր իբր Մեսիա եւ երկրի վրայ պիտի հաստատէր Աստուծոյ թագաւորութիւնը, մանաւանդ որ իր Տէրը դեռ քիչ առաջ Իր մեսիական

պաշտօնին վրայ խօսած էր եւ երկինքի թագաւորութեան բանալիները Պետրոսի խոստացած:

Ուստի երբ լսեց Յիսուսի խօսքերը՝ Անոր չարչարանքներուն ու մահուան նկատմամբ, խորհեցաւ թէ անոնք կը բղխէին միայն պարագայական յուսալքումէ եւ ուզեց իր Վարդապետը խրախուսել՝ յիշեցնելով Անոր թէ Աստուծոյ շնորհքը զինքը պիտի պաշտպանէր այդ դառն գաւաթէն. ըսաւ Անոր, «Քա՛ւ լիցի, Աստուած պահէ Քեզ, Տէր, այդ բանը քեզի չըլլայ»: Սակայն ատով Պետրոս ոչ թէ Աստուծոյ բաները, հապա մարդոց բաները կը մտածէր (Մատ. ԺԶ. 22, 23): Կը մտածէր իր եւ աշակերտակիցներուն վրայ, որոնց համար դառն բան մըն էր Յիսուսի մահը, կը մտածէր Յիսուսի վրայ, Որու մեծ վիշտ պիտի պատճառէր այդ տառապանքը, կը մտածէր Իսրայէլի վրայ, որմէ խնայել կ'ըզմար այդ ահարկու յանցանքը: Բայց կը մոռնար ամենակարեւորը. զԱստուծո, որու անդառնալի վճիռն էր՝ Քրիստոսի խաչով յայտնելու Իր անհուն սէրը:

Ասով Պետրոս անգիտակցօրէն մէկ գործիքը կ'ըլլար Սատանայի, որ արդէն մեծ փորձութեան ատեն թելադրած էր Յիսուսի՝ խուսափել մահէ եւ թագաւորութեան տիրանալ՝ իրեն երկրպագելով, սուր գործածելով: Այս անգամ Չարը մեր Տէրոջ կը մօտենար եւ զԱյն գայթակղեցնել, ձեռքէ կ'ուզէր շատ աւելի խորամանկ կերպով, Անոր սիրելի աշակերտին միջոցաւ: Սակայն Անիկա Իր սուրբ ու խորագնին ականարկով իսկոյն թափանցեց զաղտնիքի խորը, եւ տեսաւ թէ Պետրոսի բերնով խօսողը Սատանան էր, որ զինքը Աստուծոյ ճամբայէն շեղեցնել, մարդոց փրկութեան գործը ի դերեւ հանել և զինքը Իր փառաց թագէն զրկել կ'ուզէր: Ան ճանչցաւ Սատանան, քանզի ստուգապէս գիտէր թէ Աստուծոյ կամքը զինքը մահուան կ'առաջնորդէր եւ Ինքը ամբողջ սրտով պատրաստ էր հնազանդելու Անոր: Եւ երբ ճանչցած էր Սատանան, չխնայեց նոյնիսկ այն թանկագին աշակերտին, որուն քիչ առաջ ամենափառաւոր խոստումները տուած էր եւ աղաղակեց անոր երեսն ի վեր, «Ետիս գնա՛ Սատանայ, Ինծի գայթակղութիւն ես դուն»:

Այսօր այդ Չարը մեզի ալ յաճախ կը մօտենայ նոյն խորամանկ կերպերով. մեր ամենէն մտերիմ ու հոգեւոր բարեկամներու միջոցաւ եւ կ'ուզէ մեզ գայթակղեցնել ու հեռացնել Աստուծոմէ: Սակայն Սբ. Հոգին պատրաստ է միշտ ալ լուսաւորելու մեր միտքը, որպէսզի ճանչնանք մեր թշնամին, ինչ կերպարանքով ալ ան գալու ըլլայ: Բաւական է միայն որ մենք յօժարակամ գտնուինք հնազանդելու Աստուծոյ ձայնին՝ ամէն զոհողութեան գնով:

(1) Տես Բանբեր թիւ 10

Պետրոս յանդիմանուելէն յետոյ լուց, քանզի տեսաւ թէ իր դիրքն էր ոչ թէ խրատ տալ իր Տէրոջը, նոյնիսկ յանդիմանել զԱյն եւ Անոր առաջնորդ հանդիսանալու մեծամտութիւնը անուցանել իր սրտին մէջ, հապա Անոր հետեւիլ լռիկ ու հնազանդ ողւոյ։ Այս ալ ինքնին կարեւոր յառաջդիմութիւն մըն է Յիսուսի դպրոցին մէջ. այս յանդիմանութիւնէն Պետրոս սորված էր իր Տէրոջ համակերպիլ ու Անոր հետեւէն երթալ նոյնիսկ այն ատեն, երբ Անոր նպատակը անձանթ չէր իրեն։ Ատկէ ետք, երբ Յիսուս դարձեալ երկու անգամ յայտնեց թէ Ինքը պիտի չարչարուի եւ սպաննուի, Պետրոս այլեւս առարկութիւն մը չըրաւ։ Թէեւ անիկա չէր կըրնար ըմբռնել թէ ինչո՞ւ Յիսուս խաչ կրելու էր, (Մատթ. Թ. 31) թէեւ խիստ կը տրտմէր, (Մատթ. 22) խորհելով որ ատով ոչ թէ միայն իր երկրաւոր երազները շոյիի նման կը ցնդէին, հապա մանաւանդ որ Աստուծոյ փառքին յայտնութիւնը կը խափանուէր եւ չարը կը յաղթանակէր, բայց դարձեալ կը հետեւէր Յիսուսի՝ Իբր Բրիտանիա եւ իբր կենդանի Աստուծոյ Որդւոյն։ Այո՛, պատրաստ էր նոյնիսկ Անոր հետ մեռնելու եւ այդ յայտարարութիւնը կ'ընէր անկեղծ սրտով։

Այսու հանդերձ Պետրոս դեռ մեռած չէր իր յանձնապատասխանութեանը եւ իր ետին, ուշադրութիւն չըրաւ Յիսուսի ազդարարութեանը (Մատթ. ԻԶ. 34) եւ արթուն մնալով չաղօթեց՝ փորձութեան մէջ չիյնալու համար (Մատթ. ԻԶ. 41, 43)։ Ուստի երբ տեսաւ թէ Յիսուս մարդոց ձեռքը մատնուած է ու մահուան դատապարտուած Իսրայէլի սուրբ առաջնորդներուն ձեռքով, եւ երբ տեսաւ թէ Արդարն Աստուած օգնութեան չհասնիր եւ կը թողու որ Անիկա նախատինքի, ձեռի եւ անարդանքի ենթարկուի, այլեւս իր հաւատքը հիմէն խախտեցաւ եւ չկրցաւ Յիսուսը դաւանիլ իբր Իսրայէլի թագաւոր եւ Աստուծոյ Որդի. ուրացաւ զԱյն երեք անգամ եւ անիծեց։ Սակայն ան այդ արարքին չմղուեցաւ մահէն վախնալով. եթէ ան քահանայապետէն հարցաքննուած ըլլար, ինչպէս ինքը երեւակայած էր ազդարարութեան ատեն, հաւանաբար չպիտի ուրանար։ Բայց փորձութեան չդիմացաւ երբ ծաղրանքի եւ հեղնանքի ենթարկուեցաւ, երբ վախցաւ թէ իրեն պիտի ըսուի, «Ահա՛, յիմար, այն Անձը, զՈր դուն իբր Մեսիա ընդունած ես, տես, ի՞նչ խեղճ ու կրակ մարդ մըն է, դատապարտուած ձերերէն եւ լքուած Աստուծոյ»։ Մենք ալ յաճախ պիտակցօրէն կ'ամ անգիտակցօրէն չենք մղուեր ծաղրանքէ խուսափելու համար։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԿՈՄՍ ՅԻՆՅԷՆՏՈՐՖ

Ճանիմարքա այցելելով Յինցէնտորֆ նպատակ ունէր հոն ալ եղբայրական միութիւններ հաստատել։ Թէեւ իր այդ փափաքը չիրագործուեցաւ, բայց անոր այցելութիւնը ուրիշ աւելի մեծ եւ անակնկալ արդիւնք մը ունեցաւ, առիթ տուաւ սկսելու միսիոնարական գործը հեթանոսներու մէջ։

Հոն Յինցէնտորֆ հանդիպեցաւ երկու կրէօն-լէնտցիներու, որոնցմէ մի քանի տեղեկութիւններ ստացաւ էկէտէ անունով միսիոնարի մը նըկատմամբ։ Ասիկա ինքզինքը շատ մը նեղութիւններու ենթարկած էր եւ կրէօնլէնտի հեթանոսներուն Աւետարանը քարոզած, բայց իր ջանքերը շատ քիչ պտուղ տուած էին։ Ուստի իր տանիմարքացի բարեկամները յուսալքուած էին եւ կը մտածէին վերջ տալ այդ միսիոնարութեան։ Երբ Յինցէնտորֆ լսեց այս ամէնը՝ վճռեց ամէն զոհողութիւն յանձն առնելով՝ օգնութեան ձեռք կարկառել էկէտէի։

Ճանիմարքայի մայրաքաղաքին՝ Քօփէնհագի մէջ Յինցէնտորֆ հանդիպեցաւ նաեւ սեւամորթի մը, որ արեւմտեան Հնդկաստանի (Ամերիկա) տանիմարքական զաղութէն՝ Սուրբ Թովմասէն՝ կը ծագէր եւ որ Յինցէնտորֆի ըսաւ, «Իմ հայրենիքիս մէջ ունիմ քոյր մը որ թերեւս քրիստոնեայ դառնայ, եթէ մէկը անոր աւետարան քարոզէ։ Սյս խօսքը կարեկցութիւն արթնցուց Յինցէնտորֆի սրտին մէջ։ Անիկա սկսաւ խորհիլ թէ ինչպէ՞ս պիտի կրնար օգնութիւն հասցնել զժաղդ սեւամորթին։ Հերնհուլթ զալուն պէս այս ղէպքը պատմեց եղբայրներուն, որոնք խորապէս ազդուած՝ յիշեալ սեւամորթը իրենց քով կանչեցին եւ անկէ անձամբ լսեցին ամէն բան։ Լըսեցին նոյնիսկ թէ սեւամորթ գերիներուն աւետարան տանիլ ուզողը թերեւս պիտի ստիպուի ինքն անձամբ գերի մը ըլլալ, քանզի անոնք ամբողջ օրը տաժանակիր աշխատանքի մէջ էին եւ միայն անոնց վիճակակից մը պիտի կարենար անոնց հետ խօսիլ։ Այս ամենուն ազդեցութիւնը խիստ մեծ էր եղբայրներու վրայ։ Սուրբ Հոգին անոնցմէ ոմանց մէջ այնպիսի մեծ սէր մը արթնցուց հանդէպ միսիոնարութեան, որ անոնք պատրաստ էին իբր միսիոնար Ամերիկայի սեւամորթ գերիներուն երթալ յանձն առնելով վերոյիշեալ զոհողութիւններն իսկ։

Լուրջ խորհրդածութիւնէ եւ թախանձազին ազօթքէ վերջ Լէօնհարտ Տօպըր անուամբ եղ-

բայր մը ընտրուեցաւ իբր ատաշին միսիրնար Հերնհուլթի եղբայրութեան կողմէն: Նիշման կոչուած հիւան մըն ալ անոր ընկերանալու էր կարգ մը արտաքին բաներու մէջ անոր օգնելու եւ ապա եղբայրներուն լուր բերելու համար: Օգոստոս 20-24 (1732), ամբողջ գիշեր մը, Յինցէնտորֆ Տօպլըրի հետ անցուց խօսակցելով եւ աղօթելով: Աստու կանուխ ձեռք դնելով օրհնեց զայն եւ ճամբայ դրաւ Նիշմանի հետ: Իրենց քով ունէին միայն 108 ֆրանք (այսօրուան դրամով), որ իրենք անձամբ վաստկած էին: Իրենց մէյմէկ փոքր նուէր ըրաւ նաեւ Յինցէնտորֆ: Իրենց տրուած հրահանքն ալ շատ պարզ էր, անոնք ամէն բանէ աւելի Աստուծոյ Հոգիէն առաջնորդուելու էին: Ահա այդպէս սկսաւ եղբայրական միութեան օրհնաբեր միսիրնարութիւնը դանիական Սուրբ Թովմաս, Սբ. Ժան և Սանթա Քրիզ կղզիներուն (Ամերիկա) մէջ:

Յինցէնտորֆ եղբայրներու պատմեց նաեւ կրէօնլէնացիներու եւ միսիրնար էկէտէի դժուարութեանց մասին: Մի քանի եղբայրներ պատրաստակամութիւն յայտնեցին՝ հոն ալ երթալ անմիջապէս: Բայց շուտով չղրկուեցան, ստիպուեցան հինգ ամսուան փորձի շրջան մը անցնել եւ գործնականօրէն ապացուցանել թէ լուրջ էր իրենց փափաքը, ու ապա Յունուար 19, 1733ին ճամբայ դրուեցան: Ասով կրէօնլէնտի մէջ ալ սկիզբ առաւ Հերնհուլթի միսիրնարութիւնը, որ կը շարունակուի մինչեւ այսօր:

Ղրկուած եղբայրները անուս ու անփորձ էին եւ նիւթական ճոխ միջոցներ չունէին. բայց Աստուած կարճ ժամանակի մէջ մեծ գործ տեսաւ անոնց միջոցաւ. եւ պատճառները հետեւեալներն էին. —

1. Հերնհուլթի եղբայրները հալածանքի մէջ եկած էին. անոնք իրենց հաւատքին հաւատարիմ մնալու համար՝ լքած էին տուն ու տեղ, ըստացուածք ու հայրենիք և ինքզինքնին ենթարկած օտարութեան ամէն կարգի նեղութեանց: Ուստի կարող էին միսիրնարութեան զաշտերու մէջ ալ դիմանալ ամէն զրկանքի և իրենց պարզ և սակաւապետ կենցաղավարութեամբը, ճշմարիտ քրիստոնէական կեանքովը եւ Յիսուսի հանդէպ ունեցած խոր սիրովը մեծ ազդեցութիւն բանեցնել հեթանոսներու վրայ: Յինցէնտորֆ ճանչցաւ մորավեան եղբայրներու այս առաւելութիւնը եւ մեծ համբերութիւնով եւ իմաստութիւնով զանոնք կազմակերպեց ու միսիրնարական պլանդաբեր համայնքի վերածեց: Առանց անոր եռանդուն ու անձնուէր ջանքերուն՝ ֆրանսացի հիւկ-

նոններուն նման՝ չեխական այս աւետարանական եղբայրութիւնն ալ պիտի ցրուէր ու ձուլուէր՝ առանց մնալուն ազդեցութեան: Բայց Յինցէնտորֆ իբր հաւատացեալ եւ իմաստուն մարդ կարողացաւ ազատել զանոնք այդ վտանգէն եւ անոնց կրած կրօնական հալածանքը օրհնութեան աղբիւրի վերածել: Իցի՛ւ թէ հիմա ալ զանուէին անձեր, որ կարենային Աստուծոյ Հոգւոյն առաջնորդութեամբ՝ տառապանքի մէջ թրծուած հայ հաւատացեալները միացնել, խորացնել և միսիրնարական համայնքներու վերածել: Ատենն է որ այդ ուղղութեամբ խորհին ու աղօթեն մեր այն եղբայրները, որոնց Աստուած մասնաւոր շնորհք տուած է: Մեր մէջ ալ ատաղձ կայ. ունինք եղբայրներ, որոնք հայկական հալածանքի օրերուն սորված են՝ անտրտունջ կրել ամէն զրկանք եւ ամէն բանէ զերազանց դասել Քրիստոսի սէրը և մեծ բաղձանք ունին՝ տեսնելու թէ Յիսուսի անունը կը փառաւորուի մահմեականներու մէջ ալ: Միայն հարկ են մարդիկ, որոնք կարենան կազմակերպել ու ճշմարիտ ուղղութիւն տալ այդպիսիներու: Աղօթենք որ Տէրը մեզի շնորհէ այդ մարդիկը:

2. Հերնհուլթի եղբայրական միութիւնը աղօթքով պատերազմակից էր իր դուրս զրկուած միսիրնար եղբայրներուն: Շնորհակալութեան եւ տօնի օրերուն, որոնց նկատմամբ խօսեցանք նախորդ թիւին մէջ, կը կարդացուէին միսիրնարներու նամակները. ներկաները մեծ ուրախութեամբ մտիկ կ'ընէին անոնց պարունակութիւնը քանզի գրուած էին իրենց ծանօթներէն, բարեկամներէն, ազգականներէն ու եղբայրներէն: Յետոյ նամակագիրները եւ անոնց խնդիրքներն ու զժուարութիւնները նիւթ կը դառնային թէ՛ խմբական և թէ՛ առանձին աղօթքի: Միսիրնարները կը կրուէին աղօթքի թեւերու վրայ Հերնհուլթի համայնքէն, որ զիրենք զրկած էր. անոնք կը քաջալիրուէին նաեւ նամակներով: Այս փոխադարձ մտերիմ յարաբերութիւնը ո՛չ միայն միսիրնարին համար խրախուսիչ էր, հապա նաեւ ընդհանուր եղբայրական միութեան:

3. Այս միսիրնարութիւնը կը ձգտէր առանձին հոգիներ, եւ ոչ թէ ամբողջ ազգ մը Քրիստոսի առաջնորդել. ասով եւս կը հետեւէր Պօղոսի ընթացած շաւղէն, որու նկատմամբ ուրիշ առթիւ մը արդէն խօսած ենք «Բանբեր»ի սիւնակներուն մէջ եւ ըսած թէ այս է շիտակ մէթոտը միսիրնարական գործին համար: Մեր Տէրն իսկ ունեցած է նոյն գործելակերպը: Ան առհասարակ կը ջանար մարդիկը անհատ անհատ ընդունիլ

Իր թաղաւորութեան մէջ: Այսպէս կը թելադրէ «Նեղ զրան» խորհուրդն ալ, ուրկէ իրաւցնէ կարելի է միայն մէկիկ մէկիկ մտնել:

4. Հերնհուլթի միսիոնարները խաչեալ Քրիստոսը կը քարոզէին: Անոնք իրենց գործը չէին սկսէր Աստուծոյ գոյութիւնը ապացուցանելով կամ առաքինութիւն քարոզելով, հապա Յիսուսի Հարչարանքը եւ մահը պատմելով: Երբ հեթանոսները համոզուած էին թէ Յիսուս զիրենք կը սիրէ եւ երբ իրենց մէջ ալ փոխադարձ սէր արթնցած էր Անոր հանդէպ, այն ատեն միսիոնարը անոնց կը ցուցնէր թէ ինչպէս անոնք իրենց շնորհակալութիւնը կրնային յայտնել Անոր:

Այս մասին կ'արժէ յիշել Հիւս. Ամերիկայի հնդիկի մը վկայութիւնը: «Եղբայրներ, ես հեթանոս մըն էի եւ մեծցած եմ հեթանոսներու մէջ. ուստի գիտեմ թէ ինչ է հեթանոսներու վիճակը: Անգամ մը մեզի եկաւ քարոզիչ մը, որ... սկսաւ մեզի ապացուցանել թէ Աստուած կայ. այն ատեն ըսինք, «Ա՛յ, կը խորհի՞ս թէ մենք զայդ չենք գիտեր. գնա հոն, ուրկէ եկած ես: Անգամ մըն ալ ուրիշ քարոզիչ մը եկաւ եւ կ'ուզէր մեզի սորվեցնել. ըսաւ, Դուք պէտք է գողնաք, գինովնաք, ստէք, եւն: Մենք անոր պատասխանեցինք, «Յիմա՛ր, կը խորհի՞ս թէ մենք զայդ չենք գիտեր. նախ դուն ինքք սորվիր զայդ եւ ապա սորվեցո՛ւր այն մարդոց որոնց դուն կը պատկանիս... քանզի ո՞վ աւելի կը գիտովնայ, կը գոչնայ ու կը ստէ քան քու ժողովուրդը»: Այսպէս զայն ետ զրկեցինք:

Սակայն ատենէ մը ետք եղբայրական միութենէն Բաուխ եկաւ իմ խրճիթս եւ նստաւ իմ քովս: Իր ինծի ուղղած խօսքին պարունակութիւնը զրեթէ հետեւեալն էր. — «Ես քեզի կուգամ երկիրքի ու երկրի Տէրոջ անունովը: Անիկա կ'ուզէ քեզ երջանիկ ընել եւ ազատել այն թըշուառութենէն, որուն մէջ կը գտնուիս: Այդ նպատակին համար Անիկա մարդ եղած է, մարդոց համար Իր կեանքը տուած եւ արիւնը թափած: Այսպէս խօսեցաւ Բաուխ յետոյ պառկեցաւ խըրճիթիս մէջ, տախտակի մը վրայ եւ քնացաւ, քանզի իր ճամբորդութենէն յոգնած էր: Այդ ատեն ես խորհեցայ, ա՛յ, այս ի՞նչ տեսակ մարդ է. կը պառկի հոս ու հանգարտ կը քնանայ. ես կրնայի զինքը իսկոյն մեռցնել եւ անտառը նետել: Ո՞վ զիս ատար համար հարցաքննութեան պիտի ենթարկէր: Բայց ինքը առանց հոգի է... Իր խօսքերէն ես չէի կրնար ազատիլ. միշտ միտքս կ'իյնային, եւ երբ քնանայի, կ'երագէի այն արեան վրայով զոր Աստուծոյ Որդին թա-

փած է ինծի համար: Այդ ատեն խորհեցայ, այս բանը ուրիշ է, եւ ուրիշ հնդիկներու կը թարգմանէի այն խօսքերը զորս Բաուխը ետքն ալ մեզի կը պատմէր: Այդպէս մեր մէջ յառաջ եկաւ արթնութիւն մը՝ Աստուծոյ շնորհքովը: Ուստի ձեզի կ'ըսեմ, եղբայրներ, հեթանոսներուն՝ Քրիստոսն ու Իր արիւնը քարոզեցէք, եթէ կ'ուզէք անոնց մէջ օրհնութիւն յառաջ բերել»:

X X X

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

Ո՞ՒՐ ԵՆ ՔՈՒ ՄԵՂՔԵՐԴ

Այսպէս պատմեց քարոզիչ մը. —

Օր մը Իրլանտայի հարաւային քաղաքներէն մէկուն մէջ, հրապարակի մը վրայ, «Վասնզի Անիկա (Յիսուս) է մեր խաղաղութիւնը որ երկուքը մէկ ըրաւ, ու մէջտեղի բաժանող պատը, այսինքն իրարու հետ եղած թշնամութիւնը, Իր մարմինովը քակեց» (Եփես. Բ. 14-16) համարներուն վրայ կը խօսէի, զարմանքով նշմարեցի 10 տարեկանի մօտ աղջնակ մը որ լարուած ուշադրութեամբ մտիկ կ'ընէր Պատգամին: Քարոզէն անմիջապէս վերջ՝ մօտեցայ այդ պատիկին հարցնելու համար թէ արդեօք ինք ալ հաշտուած է Աստուծոյ հետ խաչին վրայ մեր տեղը մեռնող Յիսուսի շնորհքով, եւ Անոր խաղաղութիւնը կ'ըզգայ իր սրտին մէջ:

Ձեռքս ուսին՝ քաղցրութեամբ հարցուցի, «Դուն Տէր Յիսուսը կը ճանչնաս, պատիկ աղջիկ»:

Ներքին կատարեալ վստահութեամբ ժպտուն աչքերը աչքերուս յառած, պատասխանեց, «Այո, գիտեմ որ Յիսուս ինծի համար մեռաւ»:

Շատ քաղցր բան է այսքանը գիտնալը: Շարունակեցի եւ, «Բայց ինչպէ՞ս կրնաս բոլորովին վստահ ըլլալ թէ Աստուծոյ Որդին աշխարհ եկած եւ խաչին վրայ մեռած է ճիշդ քեզի պէս պատիկ աղջկայ մը համար»:

«Աստուծոյ գիրքին մէջ գրուած է. օր մը կիրակնօրեայ դպրոցին մէջ սորվեցայ թէ Աստուած անանկ սիրեց աշխարհը, մինչեւ Իր միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ. եւ մայրիկս ըսաւ թէ իմ անունս ալ կայ այդ «Ամէն ով որ»ին մէջ: Ես մայրիկիս կը հաւատամ. Աստուած երբեք սուտ չի խօսիր. Անիկա ըսած է որ Յիսուս մեռած է բոլոր մեղաւորներուն համար, ու ես գիտեմ որ մեծ մեղաւոր

մըն եմ», ըսաւ աղջիկը շատ լուրջ եղանակով մը:

«Այո, սիրելի պատիկ», աւելցուցի ես, «Գրուած է Աստուծոյ խօսքին մէջ թէ՛ «Սակայն Աստուած իր սէրը որ մեր վրայ ունէր՝ յայտնեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ» եւ ուրիշ տեղ մը, «Այս խօսքը հաւատարիմ է ու բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու, որոնց զուլար ես եմ»: Աստուած այս խօսքերով կը ցուցնէ թէ դուն մեծ մեղաւոր մըն ես, եւ դուն պարտաւոր ես հաւատալ, եւ ուստի ըսէ ինծի, բոլոր մեղքերդ ալ ներուած են»:

Վայրկեան մը լռեց աղջնակը, աչքերը անթարթ աչքերուս, յետոյ քիչ մը այլայլած զուլար ինկաւ կուրծքին, աչքերը լեցուեցան արցունքով... ապա «Կը վախճամ թէ ոչ» պատասխանեց վարանումով:

«Ինչպէ՞ս դուն գիտես որ Յիսուս քեզի համար մեռած է, եւ ասով հանդերձ չես գիտեր թէ Աստուած քու բոլոր մեղքերդ քեզի ներած է»:

Նէ նայեցաւ ինծի տաքնապալից խորունկ արտայայտութիւնով մը, կարծես հասկնալ փորձելով վերջին հարցումին նշանակութիւնը: Ուրիշ շատերու պէս հաւատացած էր ան Յիսուսի, այլ առանց հասկնալու տարածութիւնը այն մեծ գործին, որ խաչին վրայ կատարուեցաւ իրեն համար: Դուկասու է. զխոսն մէջ յիշուած կնոջ պէս պատիկը բացած էր իր սիրտը Յիսուսի սիրոյն, բայց դեռ պէտք ունէր Անոր այս խօսքին, «Բոլոր մեղքերդ քեզի ներուած են, քու հաւատքդ քեզ փրկեց, գնա խաղաղութեամբ»:

Ու ես նորէն հարցուցի իրեն « Ինչո՞ւ Տէր Յիսուս մեռած է քեզի համար,»:

«Որպէսզի գիտ փրկէ», պատասխանեց անմիջապէս պատիկ աղջիկը:

«Բայց քեզ փրկելու համար ինչո՞ւ պէտք տեսաւ Յիսուս խաչին վրայ մեռնիլ,»:

Դարձեալ զուլար կախեց. վայրկեան մը խորհելէ վերջ, լրջութեամբ ըսաւ, «Որպէսզի իմ մեղքերս խաչին վրայ տանի,»:

«Ո՞ր էին ուրեմն քու մեղքերդ երբ Յիսուսը խաչին վրայ գամեցին», հարցուցի իրեն:

«Իր վրայ», շշնջեց:

«Անկասկած», շարունակեցի ես, «Որովհետեւ Տէրը մեր ամենուն անօրէնութիւնը Անոր վրայ դրաւ: Եւ ուստի ո՞ր ես հիմա քու մեղքերդ,»:

Քիչ մնաց որ պատիկը պիտի արտասանէր թէ «Յիսուսի վրայ ես», բայց յանկարծ շրթները սեղմեց ու լռեց:

«Ո՞ր է Տէր Յիսուս հիմա», հարցուցի:

«Յարուսթիւն առած է», պատասխանեց անմիջապէս «եւ երկինք ելած է,»:

«Ո՞ր ես ուրեմն քու մեղքերդ հիմա,»:

«Գերեզմանին մէջ եմ», ուրախութեամբ պատասխանեց սիրուն աղջիկը: Ամէն դժուարութիւն վերցուած էր: Պատիկին աչքերը կը կածկւտային կարծես այս յաղթական պատասխանէն: Նէ կը տեսնէր թէ ինչպէս «Անիկա որ իր մեղքերուն համար մատնուեցաւ, զինքը արդարացնելու համար յարուսթիւն առած էր, եւ հաւատքով արդարացած ըլլալով խաղաղութիւն ունէր Աստուծոյ հետ», (Հոով. Դ. 25, Ե. 1):

Մեր խօսակցութեան վրայ հազիւ մէկ երկու խօսք ալ աւելցուցեր էի երբ պատիկը կանչուեցաւ: Տուն հասնելուն պէս պատիկը վազեց դէպի մայրը եւ անոր վզին փաթթուելով, «Ես ալ մայրիկ, ես ալ Յիսուսի քով պիտի երթամ», կը կրկնէր:

Մայրը խորունկ հաւատացեալ կին մը, թէեւ ծանրապէս հիւանդ, ճշմարիտ ուրախութեամբ մը լեցուած, հարցուց թէ ինչ էր պատահած իրեն:

«Իմ բոլոր մեղքերս շնչուած են: Յիսուս գանոնք իմ վրայէս խաչին վրայ վերցուց, բայց հիմա որ երկինք գացած է եւ Աստուծոյ աջ կողմը նստած է, գիտե՞ս մայրիկ, չէր կրնար իմ մեղքերս ալ իր վրայ առած երկինք երթալ, գանոնք բոլորը գերեզմանին մէջ թաղեց,»:

Մայր եւ աղջիկ աւելի սեղմօրէն գրկուած, ուրախութեամբ Տէրը զովեցին այս սքանչելի ճշմարտութեան համար: Այդ օրէն ասդին շատ ժամանակ է անցեր, բայց ոչ ոք եւ ոչ մէկ բան կրցած են խախտել հիմը այս աղջկան հաւատքին թէ՛ յարուցեալ Քրիստոսն է իր սրտին խաղաղութեան եւ ուրախութեան յարաբուդիս աղբիւրը:

Որքա՛ն պատիկներ կան, նաեւ մեծեր որ դեռ չեն գիտեր անձնապէս, փորձառաբար այն ինչ որ այս պատիկ աղջիկը սորվեցաւ՝ այնքան պարզ հաւատքով թէ մեր փրկութեան վստահութիւնը չհոսի մեր խեղճ սրտերուն յարափոփոխ զգացումներէն, ոչ ալ մեր սնտոյ գործերէն ու ջանքերէն, այլ միայն իրաւունքին վրայ մեր ունեցած պարզ, մանկական հաւատքէն:

Քանի՛ շարժարւած հոգիներ կան որոնց պէտք է խաչին նայիլ, ուր իրենց մեղքերը գամուած են, և իրենց թաց աչքերը երկինք դարձնել, ուր Տէր Յիսուս Աստուծոյ աջ կողմը նստած է որպէս Միջնորդ, Բարեխօս եւ Փաստաբան:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ ՄԸ

ԵՒ ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒՄԸ

Սեպտ. 18 ին, Կիրակի օրը Ալգասի Նոյվիլը կոչուած գիւղին մէջ տեղի ունեցաւ միսիոնարական հանդէսը, Action Chrétienne en Orient ի որ տասը տարիէ ի վեր Աստուծոյ օգնութեամբ մեծ օրհնութեան միջոց եղած է թէ ֆրանսահայ աւետարանական եկեղեցիներու եւ թէ Հալէպի շատ մը հայ գաղթականներու համար: Այդ առթիւ կատարուեցաւ նաեւ նուիրման արարողութիւնը Օրդ. Սօֆի եւ Պրն. Կալվին Պարսումեաններու Տէրոյ զործին: Ահա՛, ինչ որ կը գրէ այդ մասին ահանատես մը.—

— Միսիոնարական գլխաւոր պաշտամունքը տեղի ունեցաւ ժամը երկուքին: Նախ խօսեցաւ A. C. O. ի տնօրէնը, Տր. Պէրրօն, (հայերու այս անխոնջ եւ անձնագոհ բարեկամը) շատ յուզուած շեշտերով պարզեց թէ «Անոնք որ արցունքով կը ցանեն, ցնծութիւնով կը հնձեն», (Սաղմ. ճԻԶ. 5): Ապա վեր. Ղազարոսեան պատմեց Action Chrétienne en Orient ի ֆրանսաբնակ հայերու մէջ կատարուած գործին նկատմամբ. շնորհակալութիւն յայտնեց միսիոնարութեան այն բոլոր բարիքներուն համար, զոր միսիոնարութիւնը ըրած է իր եղբայրներուն եւ ապա խնդրեց անխոնջ ոգիով գործը շարունակել...: վեր. Պիրմէլէն՝ միսիոնարութեան վարչութեան կողմէն իր խօսքը ուղղեց երեք ուխտեալներուն իւր թ ունենալով Յիսուսի հարցումը, «Զիս կը սիրե՞ս»:

Այս քարոզներէն յետոյ, որոնք կ'ընդմիջուէին գեղեցիկ խմբերգներով, երեք ուխտեալները ծնրադրեցին եկեղեցւոյ բեմին առջեւ եւ օրհնուեցան ու նուիրուեցան Տէրոյը գործին: Ուխտեալներն էին.— 1, Ալգասի Օրդ. Բաթի Օսթրուման, որ այդ հանդէսէն մի քանի շաբաթ ետքը Հալէպ գնաց՝ հոն հայոց մէջ իբր հիւանդապահուհի գործելու: 2, Պրն. Կալվին Պարսումեան, որ քիչ առաջ աւարտած է Վենի (Լօզանի քով) Սբ. Դրոց դպրոցը, եւ 3, Օրդ. Սօֆի Պարսումեան, որ արդէն տարիէ մը ի վեր Լիօնի ու շրջակայից մէջ իբր աւետարանչուհի կը գործէ:

Այս գլխաւոր պաշտամունքէն քիչ յետոյ տեղի ունեցաւ ուրիշ մըն ալ, փոքր ու մտերմական շրջանակի մը մէջ, ուր նախ խօսեցաւ Պատ. Պարսումեան, որու համար այդ օրը մասնաւոր նուիրականութիւն մը ունէր. քանզի իր երկու

երեցագոյն զաւակները նուիրուած էին՝ աշխատելու Տէրոյը այգիին մէջ: Անիկա ընդհանուր ժողովականներուն մի քանի խօսք ուղղելէ յետոյ՝ դարձաւ իրեններուն: Յիշեցուց անոնց թէ ինչպէս Աստուած գիրենք տարագրութեան ընթացքին պահած էր բազմաթիւ սոսկալի վտանգներու մէջն իսկ, ուրկէ իրենք անցնիլ ստիպուած էին: Մէջ բերաւ իտալացի պետական անձնաւորութեան մը խօսքը. «Ով Իտալիա՛, Իտալիա՛, դուն տուած ես ինծի այս կեանքը եւ ես քեզի կը վերագարձնեմ զայն», եւ ապա ըսաւ իր զաւակներուն, «Նոյնը ընելու էք եւ դուք. Աստուած ազատած է ձեր մարմնաւոր կեանքը եւ փրկած ձեր հոգեւոր մարդը, ուստի դուք պարտաւոր էք այս կրկնակի ազատագրուած կեանքը Աստուծոյ ծառայութեանը նուիրել: Եթէ դուք աշխարհի մէջ ամենէն բարձր եւ փառաւոր պաշտօններուն ալ տիրացած ըլլալիք, իմ ուրախութիւնս այնքան մեծ չպիտի ըլլար, որքան այսօր, երբ ես արտօնուած եմ ձեզ Աստուծոյ ծառայութեանը նուիրելու»:

Յետոյ Պրն. Կալվին Պարսումեան տուաւ իր վկայութիւնը եւ յայտնեց իր ուրախութիւնը՝ Տէրոյը ծառայութեանը մէջ մտնելու արտօնութեանը համար: Իր զգացմանը ճշմարիտ թարգմանն էր այն մենեղը, զոր այս երիտասարդ եղբայրը երգեց իր գեղեցիկ ձայնովը, եւ որու կրկներգն էր, «Տէր Յիսուս, Քեզ կը սիրեմ, Քեզ համար ես ուխտեալ եմ»,:

Խօսեցաւ նաեւ հիւանդապահուհի Օսթրուման բնաբան ունենալով, «Յիսուսէն զատ մէկը չտեսան»,: Օրիորդը շեշտեց թէ այս խօսքը իրեն ոյժ պիտի տայ միսիոնարական գաշտին վրայ ունենալիք գործին, դժուարութիւններու եւ նեղութիւններու ատեն:

Այսպէս վերջացաւ այդ հանդիսաւոր օրը: Բոլոր ներկաները բաժնուեցան անկէ օրհնուած եւ սիրով լեցուած Action Chrétienne en Orient միսիոնարութեան հանդէպ:

«Բանբեր», իր ուրախութիւնը կը յայտնէ Պարսումեան ընտանիքին եւ կը մաղթէ որ Աստուծոյ իմաստութիւնը, զօրութիւնը եւ սէրը ընկերակցի Պրն. Կալվին եւ Օրդ. Սօֆի Պարսումեաններու իրենց դժուարին եւ նուիրական գործին մէջ:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN, 39, Rue St.-Savournin - Marseille

Վրիպակ.— 15/րդ էջին վերջաւորող յօդուածին տակ կարդալ Խարզ. բառը ստորագրելու էն էն առաջ:

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարանամիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԻ—Հովիտ' (Վեր.) 8. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին. կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Deille,

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց մանկանց 11 Rue de l'Eclipse
(Շարանամիջի ժողովներ Սէն Լուի, Կարաանի, Սէն Ժիւլիէնի, Սէն Սեռուանի, Սէն Մարկրիթի, Սէն Ժերոմի Պուլվար Օտօի մէջ):

ՍԷՆ ԼՈՒ.—

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. Գրական ուսումնա.
16 ին քարոզածողով:

ՍԷՆ ԹՐԱՆԿԻՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՅԱ.— Քարոզիչ՝ Պրն. Ս. Պագալեան,
14 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ.—Հովիտ՝ Պատ. Ա. Փափաղեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷԹ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՕՆ ԹԵԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԱԼԻՍ.—Քարոզիչ՝ Պրն. Վահան Սահակեան,
18 Rue de l'Isle.

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ.— Հովիտ՝ Պատ. Ժ. Պարոտեան,
18 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ԷՍԹՐԷՍ.—

Կիր. ժամը 10. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով Pascalի շէնքը

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԵՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆ ԹԵՐԵԶ.—Քարոզիչ՝ Պրն. Ի. Արրաֆաւեան
2. Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ:

ՍԷՆ ՇԱՄՍՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

ԲԱՐԻՋ.— Հովիտ՝ Պատ. Զ. Բ. Պատաքեան,
13 Bd. du Lycée Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2^e

Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին

37 Rue Tournesfort Paris 5^e
Metro Mouhe Aut. K.

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդաց
Քրիստոնէական Միութիւն

բանաստեղծիւնք եւ ուսումնասիրութիւնք:
Ամսոյն Գ. կիրակիները երիտասար.

դուհեաց Քրիստոնէական Միութիւն
բանաստեղծիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Դ. կիրակիները Սբ. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով
59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիտ՝ Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք
Rue des Brochets, Alfortville.

Ծնունդն ու Նոր տարին կը մօտենան: Շատեր կը փափաքին իրենց սիրելիներուն նուէր մը տալ. աժան նուէր մը որ թէ ուրախութիւն պատճառէ եւ թէ ներքին շինութեան ծառայէ:

Խմբագրութիւնս այդ մասին ղիւրութիւն մը տալու նպատակաւ հետեւեալները կը ներկայացնէ որպէս մնայուն ու օգտակար նուէրներ:

1. Մեր ՌԲՆՈՅՐԸ 1933 տարուան համար, որ կը պարունակէ համար մը ամէն մէկ օրուան համար: Խորհրդածութեան նիւթեր եւ գեղեցիկ պատկեր մը ամէն մէկ ամսուան համար: Ան իր այս պարունակութեամբ կը լուսաւորէ միտքը եւ կը սփոփէ սիրտը:

2. Մեր ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

(ա խաբի շովիւր, Գուրզ զարնող փրկիչը, ցիսուս ծովն ու հովը կը հանդարտեցնէ, Մարիամ եւ Մարթա (Մեծութ. 37 սմմ. երկ. 27 սմմ. լայն. գին՝ 5 ֆր. ձեռքէ, 6 ֆր. թղթ. ծախքով)

բ) Տասը կոյսերը (Մեծութ. 29 սմմ. երկ. 26 սմմ. լայն. գին 4ֆր. ձեռքէ, 5 ֆր. թղթ. ծախքով):

գ) Լայն ու նեղ Ֆամբան. (Մեծութ. 63 սմմ. երկ. 50 լայն. գին 6 ֆր. ձեռքէ, 7 ֆր. թղթ. ծախքով):

3. Մեր ԳԻՐՔԵՐԸ, որոնք Ծննդեան եւ Նոր տարուան առթիւ մասնաւոր զեղջով մը պիտի տանք:

Սատու Սունտար Սինկի 160 էջ. գին 6 ֆր. Ֆրանսա եւ Սուրիա (փոխանակ 10 ֆր.), արտասահման 40 սէնթ (փոխանակ 75 ս.): բ) Ճօրճ Միւլըրի կենսագրականը 160 էջ. գին 6 ֆր. (փոխանակ 10 ֆր.). արտասահման 40 սէնթ (փոխանակ 75 ս.): գ) Անապատի եկեղեցին. Աւետարանի յաղթանակը Ֆրանսայի սէջ, 112 էջ, գին 5 ֆր. Ֆրանսա եւ Սուրիա. արտասահման 25 սէնթ (փոխանակ 50 ս.): դ) Ուղեցոյց Ֆամբորդին մահուանէ ղէպի կեանք. 224 էջ, լի պատմութիւններով. 4 ֆր. Ֆրանսա, արտասահման 20 սէնթ (փոխանակ 50 ս.):

4. «Բանբեր» 1933 տարուան համար:

Հակառակ տիրող անսոսական տագնապին, 1933 ին ալ պիտի շարունակենք «Բանբեր»ի հրատարակութիւնը այժմու ծաւալովը՝ վստահելով Տէրոջ օգնութեան եւ առաջնորդութեան: Ուստի կը խնդրենք որ մեր բաժանորդները հասին մեզ հիմակուրէն իմացնել բաց նամակով մը՝ թէ իրենց սիրելի է յաջորդ տարի (1933 ին) ալ ստանալ սեր թերթը: Շատ շնորհակալ պիտի ըլլանք, եթէ ընթերցողները հասին գտնել ուրիշ բաժանորդներ ալ: «Բանբեր», ի նպատակն է Աստուծոյ գործին յառաջդիմութիւնը, ուստի անոր տարածմանը նպաստել թող հասին այն ամէնը որոնք Տէրը կը սիրեն: